



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

RECEIVED
MAY 10 1888

8707



~~W-1333~~

1963


10

~~245~~

ԱՌԱԶՆՈՐԴ

ՔԱՂԱՔԱՆԲՈՒԹԵԱՆ

2



THE BOARD

OF THE UNIVERSITY OF CALIFORNIA

№ 297 133 3

ԱՌԱՋ ԵՈՐԳ

ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ

ՄԱՅՐԵՐՈՒՆ

ԳԱՍՏԻՍՏԱՆԻՈՒԹԻՒՆԷ

ԱՆՆԱՏԱՆԻՐԵԱՑ

Խ. Յ. ԿԻՒՄԻՒՇԵԱՆ

Սրբազրուքեամբ և Յաւելոյածով
Նորոգ Տպագրեալ

ԿՈՍՏԱՆԳՆՈՒԳՕՂԵՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՌՈՒԲԵՆՆԱԿՐԻՔՅԵԱՆ

— 1858 —

3048



Ի ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼՍՈՅ

Տ . Տ . ՅԱԿՈՎԲԱՅ

Ե.ՕԳԵՍԵԻՐ ԵՒ ՎԵՀԵՓԵՈՒ

ԱՐՀԻԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Ա Ռ

Ծ Ե Ո Ղ Ս Ի Մ Ս Ի Բ Ե Լ Ի

Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ս Ի Բ Ո Յ

Է Կ

Ե Ր Ա Խ Տ Ա Գ Ի Տ Ո Ի Թ Ե Ա Ն



UNIVERSITY OF TORONTO

LIBRARY

18

1877-1878

ՅԱՌԱՋԱԲԱՆ



ԵՐԿԱՐ ժամանակէ 'ի վեր այս տեսակ աշխատութիւն մը՝ Ազգին ներկայացընելու միտքն ունեինք : Սակայն մեր անկարողութիւնը, մեր գրջին տկարութիւնը՝ այս փափաքնուս արգելք ըլլալով, կ'սպասեինք որ առէլի ընտիր գրջի տեր մարդիկ այս նիւթը ձեռք առնեն, ու ազգերնուս մարդկութեան եւ ազգութեան պաշտօնը ցոյց տան :

Բայց մեր ակնկալութիւնը պարապն էլաւ, ու ընտիր գրիչներն այս մասին լուռ կեցան :

Այն ատեն ամեն արգելք մեկդի դնելով, ինքիրեննուս ըսինք « Ճըշմարտութիւնը ինչ լեզուով որ ըսվինէ՛ միշտ բարի է » . ու այս նպատակով ճամբայ էլանք :

Թող ընթերցողը մենե շքեղ ոճ մը եւ երկար գրութիւն մը չ'սպասէ : Ասանկ փափուկ նիւթի մը վրայ գրողի մը՝ պարգութիւնն ու համառօտութիւնը պարտք մ'էր . մենք ալ այս պարտքէն դուրս չ'էլանք :

Դիտմամբ եւ փորձով համոզված էինք, որ ամեն բանին կատարելութիւնը՝ իր սկիզբին կատարելութենէն կախում ունի . հետեաբար մարդուս ալ կատարելութիւնը տը-

դայութեան ժամանակ, իրեն տըր-
ված դաստիարակութենէն . որուն
գլխաւոր առաջնորդը միայն մայ-
րերը կրնան ըլլալ :

Այս ճշմարտութիւնը յայտնելու
համար, դաստիարակութեան վրայ
գրող հեղինակներն առաջնորդ բըռ-
նելով՝ մեր աշխատութիւնը երէք
մասի բաժնեցինք :

Ա. Մայրերուն դաստիարակութիւնը :

Բ. Հոգիին դաստիարակութիւնը :

Գ. Մայրերուն կրօնքը :

Քաղաքակրթութիւնը առանց այս
երէք սկզբունքներուն անկարելի ըլ-
լալով, այս աշխատութեան անունը
ԱՌԱՋՆՈՐԴ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ
դրինք : Վասն զի՝ եթէ կրթեալ մայ-
րեր չ'ըլլան նե՛ կրթեալ տղայք ալ
չ'են ըլլար . եթէ հոգիին զգացում-

ները ջ'ըլլան նե' մարմինին գգա-
ցումները կարգադրութեան տակ
ջ'են մտներ . եւ եթէ ճշմարիտ հա-
ւատք ջ'ըլլայ նե' աւելորդապաշ-
տութիւնը վտանգաւոր կերպով կը
տիրէ :

Այս երեք սկզբունքները պարզ
եւ համառօտ կերպով , որքան որ
մեր բաւականութիւնը կը ներէր նե ,
այս գրքին մէջ բացատրեցինք , ու
կը յուսանք զի Ազգին բարի ընդու-
նելութեանը կ'արժանանայ . որով
մենք ալ մեր նպատակին հասած
կ'ըլլանք :

ԱՄԱՍ

ՍԱՏՐԵՐՈՒՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Ա. ԳԼՈՒԽ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

ՄԱՐԴՈՑ բարի կամ չար վարմունքը, տղայութեան ժամանակնին իրենց տրված դաստիարակութենէն կախում ունի: Ազգերնուս մեջ կան անանկներ, որ դաստիարակութիւնը բանի տեղ չը դնելով՝ կը կարծեն, որ աղէկ մարդիկ՝ այն աղէկութիւնը ծնած օրերնէն հետերնին կը բերեն:

Այս կարծիքը սխալ ըլլալուն վերայ համոզվելու համար կը բաւէ որ մարդ, նոր ծնած տղայ մը աղէկ

դիտե: Տղայ մը երբոր իր մօրը արգանդէն կելնէ, անասուններէն եւ կենդանիներէն այ խեղճ վիճակի մեջ է. ինչո՞ւ որ ասոնք բնական ազդեցութիւններ ունին որ զիրենք կ'անաշնորդեն ամէն բանի մեջ. բայց տղան այս բնական ազդեցութիւնը չ'ունենալով՝ վնասակարը կամ օգտակարը չը կրնար մեկզմեկէ գատել, եւ աշխարհիս ամէն բաներուն երեւոյթը մի եւ նոյն ազդեցութիւնը ունի իր վրայ. որովհետեւ բոլոր իր զգայարանքները անկատար են եւ ետքէն առնելիք կատարելութիւնը դեռ չ'ունին:

Տղան իր վիճակին մեջ, ոչ չար կրնայ ըլլալ եւ ոչ բարի, եւ խելքի դեմ բան է ուրիշ կերպ մտածելը: Իր բարի կամ չար ըլլալը՝ ծը-

նողքին իրեն տալիք դաստիարակութենէն կախում ունի . որովհետեւ տղան իր տեսածը կամ լսածը պիտի սորվի : Թէ որ աղէկ տեսնէ՝ ինքն ալ աղէկ կը գործէ . թէ որ գէշ տեսնէ՝ ինքն ալ գէշ կը գործէ :

Ուրեմն Երոպացոց առակը շատ ճշմարիտ է թէ՛ « Ծնողքն ինչ՝ տղոջն ալ ան » :

Ցաւելով կը տեսնեմ որ ազգերնուս մեջ , տղայոց կրթութեան մասին , նիւթականը մտաւորականէն յարգելի բռնըված է . բայց ասի վրտանգաւոր հետեւանք մ'ունի , որ մարդուս վսեմ պաշտօնը կը մոռցրնէ ու անասուններուն կարգը կ'իջեցընէ : Սակայն Աստուած մարդս անասուններուն նմանելու համար չ'ստեղծեց , եւ ստեղծած ժամանակն

այ, անանկ զգացումներով զարդարեց, որոնք մեզ իրեն նման կ'ընեն :

Արդեօք անոր կամքին դեմ եւ զինքը անարգած ջե՞նք ըլլար, երբ անոր տըված բարի զգացումները կը խափանենք : Բայց այս մարդկային անցանոր կեանքերնէս ետքը՝ անանց կեանք մ'այ պատրաստըված է, ուր արարիչը, պիտի քննէ թէ մեզի տըված զգացումները ի՞նչ կերպով գործածած ենք, եւ ըստ այն պիտի վարձատրէ մեզ :

Ով մարդ, դուն այն միջոցը միտքըդ ջես բերեր, ու աշխարհքիս վերայ թեզի յատկացեալ բարձր տեղին՝ ուզելով կ'իջնես անասուններուն կարգը :

Ի՞նչ պետք է ընել, մարդուս իբր գերազանցութիւնը հասկըցընելու :



Տղայութեան ժամանակը
դաստիարակութիւն մը տալ :

Բ. ԳԼՈՒԽ

ՃԱՄԱՆԱԿԻՍ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Որմէնէտէ յառաջադիմութիւն ու
լուսաւորութիւն բառերը ամենուն
բերնին մէջ կը պտըտին , որմէնէ-
տէ ընդհանուր կարծիքը , այլ ազգը
յառաջադիմութեան ու լուսաւորու-
թեան ճամբին մէջ կը տեսնէ , ցա-
ւայի ճշմարտութիւն մը կը զարնէ
դիտող մարդուն աչքին . այս բա-
ռերը ոչ երբէք իրենց բուն նշանա-

8107

կուրեամբը հասկըցված են . եւ շատ
անգամ արտաքին ու առերեւոյթ ի-
րերու վրայ կը կայանան , գանոնք
գործածողներուն մտքին մէջ : Ասոր
համար է որ ամեն տեղ մեր ազգին
մէջ յառաջադիմութիւն կը տեսնեն
ու կը հռչակեն ոմանք : Եւ յիրաւի
թէ որ այս օրուան Հայերը քսան
տարի առաջվան Հայերուն հետ բաղ-
դատելու ըլլանք՝ տարբերութիւն կը
գտնենք . եւ այս տարբերութիւնն
այ բաւական երեւելի է : Նշանա-
ւոր փոփոխութիւն մը կայ Ազգին
վրայ : Ասի մարդ չը կրնար ուրա-
նայ : Բայց այս փոփոխութիւնը յա-
ռաջադիմութիւնն է արդեօք :

Ահա լուծվելու խնդիրը :

Ի՞նչ է յառաջադիմութիւնը , կամ
ճիշտ խօսելով քաղաքակրթութիւնը :

Քաղաքակրթութիւնը մարդուս
կատարելութեան կէտն է, որ հոգե-
ւոր եւ մարմնաւոր կարօղութեանց
զարգացմամբը, եւ այս երկու տե-
սակ զգացումներուն ներդաշնակու-
թեամբը կրնայ յառաջ գալ :

Ա՞յս է մի ինչ որ մենք քաղա-
քակրթութիւն կը կոչենք այսօր:

Ահա դիտե՛ սա երիտասարդը որ
ժամանակիս կրթեալներէն է:

Վայելուջ կերպով եւրոպական
հագուստ հագած է . աղէկ Ֆրան-
սերէն, Անգղիերէն կը խօսի, կը
պարե ու դաշնովին կը զարնէ. վեր-
ջապէս կատարեալ մարդ մը կ'երե-
ւայ դրսէն:

Մօտեցիր իրեն ու սկըսէ խօսիլ:
Քանի որ խօսակցութիւնը նիւթա-
կան բաներու վրայ կը դառնայ՝ շատ

ադէկ կը պատասխանէ. բայց ան-
ցիր մտաւորական կամ հոգեւոր մա-
սին : Խօսէ իրեն առաքինութեան,
բարոյականի, կրօնքի եւ Աստուծոյ
վրայ՝ շուտ մը կը լռէ. որովհետեւ
պատասխանելու կարօղութիւնը չու-
նի : Չ՛գգար, չ՛իմանար մարդուս
սրտին այն Աստուածային զգացում-
ներն, որոնցմով մարդս անասուն-
ներէն եւ կենդանիներէն կ՛որոշվի.
Ինչու որ իրեն տրված դաստիարա-
կութիւնը միայն իր մարմնական մա-
սին վրայ ազդած է, ու հոգին ան-
զգայ մնացած է :

Ի՞նչ տարբերութիւն ունի ուրե-
մըն քսան տարի առաջուան Հայ ե-
րիտասարդէ մը :

Եւրոպական հագո՞ւստ մը, եւ
Ֆրանսերէն կամ Անգղիերէն լեզու-

ներուն խօսակցութիւնը :

Այն հագուստը կապիկ մ'ալ կըր-
նար վայելուչ կերպով հագնիլ . այն
Ֆրանսերէնը թութակ մ'ալ կրնար
արտասանել :

Ո՛չ , ոչ . մարդուս նպատակը
կապիկի մը կամ թութակի մը նմա-
նիլ չէ . որովհետեւ այն ժամանա-
կը Արարիչը մեզ անոնցմէ տարբեր
չէր ստեղծեր :

Մարդս կենդանիներէն աւելի
բան մ'ունի իր մէջը . այն բանն ալ
հոգին է , ուրկէ կը բղխին առաքի-
նութիւնը , արդարութիւնը , անվախ-
ճանին ու գեղեցիկին զգացումը :

Ահա այս հոգեւոր զգացումնե-
րուն , մարմնաւոր զգացումներուն
հետ կապակցութիւնովն է , որ քա-
ղաքակրթութիւնը մարդկային սե-

ուին մեջ կը մտնէ . որովհետեւ միայն ասոնցմով մարդս կատարեալ կրնայ ըլլալ . եւ ինչպէս որ ըսինք , քաղաքակրթութիւնը , մարդուս կատարելութեան կետն է . որով Աստուծոյ կը մօտենայ :

Քանի որ տղան ջափահասութեան հասած չէ՝ ժամանակիս դաստիարակութիւնը շատ վայելուց կերեալ :

Ո՛վ հայրեր եւ մայրեր . կը խընդաք , կ'ուրախանաք , երբոր գաւկըներնուդ վայելուց կերպով հագվիլը եւ միշտ գեղեցիկ երեւալութեամբ կը տեսնեք . սրտի գոհութեամբ կը վճարեք Ֆրանսերենի , Անգղիերենի , Գծագրութեան , Վայելչագրութեան , Պարի , Երգի վարպետները :

Ասոնք բոլորն ալ , ես ալ կը խոստովանիմ որ , տղի մը շատ առեկ կը վայլեն : Բայց զաւակներնիդ միշտ տղայ պիտի ջը մնան . անոնք պիտի մեծնան , ու զգան մարմնական զգացումները , ուրկէ յառաջ կուգան աշխրհիս բոլոր գեշութիւնները : Կը յուսա՞ք որ տըված նիւթական դաստիարակութիւննիդ , անոնց այս բռնն զգացումները հանդարտեցընէ . թէ որ անանկ է նե՛ ինչու համար առջի պէս վրանիդ սեր ջունին . ինչո՞ւ համար քովերնեդ հեռու կը պտըտին . ինչո՞ւ համար որդիական պարտքերնին մոռնալով , անհնազանդութիւն կընեն ձեր հրամաններուն . ինչո՞ւ համար մինչեւ անգամ ձեր ընկերութիւնը ճանճրալի կուգայ իրենց : Ինչո՞ւ այս

յանկարծական փոփոխութիւնները :

Զառակնիդ առաջ տղայ էին ,
բայց հիմա մարդ եղան . եւ մարդն
այ մարմնական զգացումներ ունի ,
ասկէ ետքը անոնց պիտի հնազան-
դին ու ծառայեն . այ՛ն՝ անոնց պի-
տի հնազանդին մինչեւ իրենց գե-
րեզմանին դուռը :

Միայն անոնց մարմնական մա-
սը կրթեցիք , միայն դուրսիդինին
զարդարեցիք , ոսկեզօծեցիք , ու հո-
գին անզգայ թողուցիք՝ չափահա-
սութեան փոթորիկն եկաւ ետեւնուն
հասաւ , ու այն զարդերն արեց
սրկըրթեց :

Մե՛ղք ձեր այնքան աշխատու-
թեանը :

Սակայն ո՞րքան տարբեր կըլլար
ետեւանքը , եթէ մարմնական մա-

սին հետ, հոգեւորն այ դաստիարակվեր. տղաք միայն իրենց մարմնաւոր գգացումներուն հնազանդելունն տեղ, հոգեւոր գգացումներունն այ կը հնազանդէին, որոնց միութիւնովն ու ներդաշնակութիւնովը, մարդս աշխարհքիս վրայ իրեն յատկացեալ ճամբան կը ճանչէ, եւ ճիշտ իր նպատակին կը դիմէ, որ է երկինքը. մարդս երկինքին մօտեցնողը հոգին է. անոր գգացումները ունեցողը լուսաւորեալ կը սեպվի եւ ջ'ունեցողը խաւարի մեջ է :

Ո՛վ հայրեր եւ մայրեր. թէ որ կուգեք ձեր գաւկըներուն բարի ըլլալն՝ մի՛ մարեք անոնց սրտին այս լոյսը :

Մարդս՝ երբ այն լուսովը լուսաւորված է՝ իր դիմացինը, իր ան-

ճին պէս կը սիրէ , իր շահը անոր
բարիքին կը գոհէ , ու հետեւաբար
ազգասէր է . աւելի ճիշտ խօսելով
մարդասէր է . որովհետեւ իր սըր-
տին մէջ Աստուած մը կգգայ է . ա-
նոր սերն ունի : Իրեն այ բոլոր մար-
դերուն այ հայր կը դառանի զանի ,
է . մարդերն իրեն եղբայր կը ճան-
ջէ . որով ազգերն իրարմէ զատող
պատուարները կըլնին իր աջքին առ-
ջէ . այ ոչ Հայ կայ իրեն համար
է . ոչ Յոյն , ոչ Անգղիացի է . ոչ
Ֆրանսացի . հապա ընդհանուր մարդ
կային ազգը . մէկ ընտանիք մը աշ-
խարհքիս վրայ , է . մէկ Հայր՝ Եր-
կինքը :

Մարդս , իր այս կատարեալ վի-
ճակին մէջ , Աւետարանին համե-
մատ վարվող մարդն է :

Տէր Աստուած , որքան հեռու
ենք այս կէտէն :

Գ • Գ Լ Ո Ւ Խ

ՄԱՆԿԱՆՅ ՃՇՄԱՐԻՏ ԴԱՍՏԻԱՐԱԿԸ

Շատեր կան , որ կը կարծեն թէ
մանկանց դաստիարակութիւնը ի-
րենց վեց կամ եօթերորդ տարիքին
մէջ կը սկսուի , այսինքն դպրատուն
երթալու ժամանակնին . հետեւա-
բար , դպրատունները դաստիարա-
կութեան տեղի եւ վարժապետները
դաստիարակ համարված են :

Ես կը կարծեմ , զի ճշմարիտ

դաստիարակութեան տեղը տունն է ,
էւ ճշմարիտ դաստիարակն այլ տը-
ղին մայրն է . որովհետեւ բնութիւ-
նը տղան՝ նախ էւ առաջ վարժա-
պետի մը չը յանձնէր . այլ մօր մը ,
որուն մայրական սէրը , խնամքը ,
էւ բարի օրինակները , անոր նորա-
ծին զգացումներուն պիտի առաջ-
նորդէն ու վարժապետին պաշտօնը
պիտի պատրաստեն :

Հագար անգամ թող ըսեն թէ տը-
ղոց գեշ վարմունքը չափահասու-
թեան ժամանակնին չը մնար :

Վտանգաւոր կարծիք . . . որ գը-
րեթէ բոլոր երիտասարդներնուս ա-
րիւնը կը մտնէ :

Ամեն բանին բարի կամ գեշ կա-
տարումը իր սկիզբէն կախում ունի :

Եթէ աղէկ դիտես՝ տարի ու կես

կամ երկու տարվան տղու մը զգա-
յութիւններուն գլխաւորները արթըն-
ցած կը գտնես: Իր ծնօղբը կը ճան-
ջէ, խնտում երես մը գինքը կ'ու-
րախացընէ, եւ տրտում երես մը կը
տրտմեցընէ. հետաքրքրութիւնը այն-
քան արթընցած է որ բոլոր տեսած-
ները քննել ու շօշափել կ'ուզէ, եւ
կ'սկըսի բոլոր տեսածներուն նմա-
նութիւնն ընել:

Ահա այս միջոցին է, որ ճշմա-
րիտ դաստիարակութիւնը կ'սկըսի:
Ո՞վ կրնայ ուրեմն, մօրմէ մը աւե-
լի անորևորածին զգացումները քնն-
նել եւ առաջնորդել: Ո՞վ կրնայ մօր-
մէ մ'աւելի, իր դիմացինը սիրել եւ
աղբատին : օգնել սորվեցընել: Ո՞վ
կրնայ մօրմէ մ'աւելի աշխարհիս Ա-
բարջին սերը անոր սրտին մէջ դը-

նել: Ո՞վ կրնայ, վերջապէս, մօրմէ մ'աւելի այս կակուղ մօմին գեղեցիկ ճեւ մը տայ:

Վարժապետ մը իր բոլոր գիտութիւններովը միայն աղէկ աշակերտներ կրնայ հասցընել. բայց մայր մը կատարեալ մարդիկ կը հասցընէ:

Մեծն Նաբօլեոն կ'ըսէր. « Տղի « մը ապագան միշտ իր մօրը գոր- « ծըն է » : Այս խօսքին ճշմարտութիւնը պատմութիւնն ալ կը յայտնէ: Բոլոր անուանի գիտունները, իմաստասէրները եւ բանաստեղծները, կը խոստովանին՝ որ իրենց բարի զգացումները մօրերնուն պարտական են. ինչո՞ւ որ վարժապետը՝ միայն տղին միտքը կը զարդարէ. բայց մայրը՝ հոգին կարթնցընէ, եւ կատարելութիւնն ալ հոգիին արթըն-

նայովը կ'ըլլայ :

Օհ . . . ո՞րքան մարդիկ կու-
գան կ'անցնին առանց արթննալու :

Գ. ԳԼՈՒԽ

ԿԻՆԵՐՈՒՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

Կինը մարդուս վրայ կ'իշխէ , եւ
մարդս առանց գիտնալու իր կիր-
քերէն ստիպված' պարտաւորեալ է
անոր հնազանդելու : Աշխարհքիս
վրայ , քաղաւորէն բռնէ մինչեւ
մուրացկանը , վայրենիէն մինչեւ
քաղաքակրթեալը , այս հնազանդու-
թեան տակն են . ինչու որ ամէնքն

այ մարդ են եւ կիրքերու տեր :

Պատմութիւնը մեզի հազարներով օրինակներ կուտայ այս ճշմարտութեան վրայ . եւ կը տեսնենք որ անուանի ինքնակայներ , բռնաւորներ եւ հեղինակներ , այս հնազանդութենէն դուրս ջեիւն , եւ կնոջ մը խօսքով՝ շատ անգամ բարբարոս մարդիկ , բարիքներ գործած են , նմանապէս բարի մարդիկ այ գեշութիւններ :

Սակայն կիներուն , այս բարի կամ գեշ ազդեցութիւնը , մարդուն անունց հետ աղեկ կամ գեշ վարվելէն կախում ունի : Թե որ անոնք պատուենք՝ մենք այ մեր պատիւը կը գտնենք . թե որ անոնք անարգենք՝ մենք այ անարգելի կըլլանք : Ինչո՞ւ որ մեր կիրքերը կը ստիպեն

մեզ, միշտ անոնց հաճոյ երեւալու
եւ կամքերնին կատարելու . ուրիշ
կը հետեւի սա բնական օրենքը, որ
կինը միշտ մարդս իրեն կը նմանցը-
նէ . որովհետեւ մեկին կամքը կա-
տարել ըսելը, անոր կամքին եւ մը-
տածած կերպին համեմատ վարվիլ,
եւ մեկ խօսքով անոր նմանիլ ը-
սել է :

Ուստի՛ թէ որ բնական օրենք մըն
է մարդուս կնոջ ազդեցութեան տա-
կըն ըլլալը՝ ո՞րքան գեշ ըլլալու է
այս ազդեցութեան հետեւանքը, թէ
որ այն կինը հետին կարգի էակ մը
համարված ըլլայ . եւ ո՞րքան բարի
ըլլալու է այս ազդեցութիւնը, թէ որ
այն կինը պատուելի էակ մը հա-
մարված ըլլայ :

Այս երկու պարագային մեջ ալ,

մարդս կնոջ պէս պիտի ըլլայ :

Ասանկ ուզած է Ասատուածային արդարութիւնը , որ երբոր նուաւտացընենք կիները , մենք ալ անոնց հետ ցածնանք , եւ երբոր մեծարենք զանոնք , մենք ալ լաւանանք :


Երբոր կինը իր պաշտօնը ջը գիտեր ու ջը ճանչէր մարդս անասուններուն կարգը կ'իջնէ . իսկ երբոր կինը իր պաշտօնը գիտէ ու կը ճանչէ՝ մարդս դեպ 'ի քաղաքակրթութեան կ'առաջնորդէ :

Ամեն տեղ , ինչ կարգի եւ պարագայի մէջ որ ըլլայ , կիները միշտ մարդոց առաջնորդն են :

Ազգին ուշադրութիւնը այս ճրջմարտութեան վրայ կը հրաւիրեմ :

Թէ որ կ'ուզենք առաջ երթալ՝

կիներուն պաշտօնը եւ կարգը իրենց ճանչցրենք :



Ե. ԳԼՈՒԻ

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԸՆՏԱՆԻՔ



Պատասխանի ետ նոցա և ասէ .
չիցէ՞ ընթերցեալ ձեր թէ որ
հաստատեացն 'ի սկզբանէ՝ արու
և էգ արար զնոսա և ասէ :

Վասն այսորիկ թողցէ այր՝ ըզ
հայր և զմայր և երթիցէ զհետ
կնոջ իւրոյ , և եղիցին երկօրեան
'ի մարմին մի : Ապա ուրեմն ոչ են
երկու այլ մի մարմին : Վրդ զսր
Աստուած զուգեաց՝ մարդ մի
մեկնեցէ : (Մատթ. ԳԼ. ԺԺ) :

Խիստ քիչ մարդ կան ամուս-
նութեան եւ ընտանիքի յարգը ճան-

չող . որովհետեւ շատ հայրեր եւ մայրեր , չը կարգըված մարդոց հետ խօսած ժամանակնին կ'ըսեն « թէ որ կ'ուզէք միշտ հանգիստ մնայ' մի կարգըվիք » :

Ըսել է որ բոլոր քաշած անհանգըստութիւններուն պատճառը , ամուսնութեան կուտան կոր : Սխալ կարծիք . . . :

Ամուսնութիւնը ամենեւին գեշ չէ . այլ մեզի տրված դաստիարակութիւնն է գեշ , որուն հետեւանքը ամուսնութեան ժամանակը երեւան կ'ելնէ . եւ կրնամ ըսել որ ամուսնութիւնը բարի կամ գեշ դաստիարակութեան փորձաքարն է :

Ամենքնիս ալ բնականէն կանջըված ենք աշխարհիս վրայ կնոջ ընկերութեամբն ապրելու . բնակա-

ճեն կ'ըսեմ՝ որովհետեւ երբոր Աստուած մարդս ստեղծեց, արու եւ եգըրաւ զանոնք . եւ անկէ 'ի վեր մինչեւ այսօր հաւասար թընով կը ծընին աշխարհիս վերայ մանչ ու աղջիկ :

Ուստի պետք է որ, մարդիկ տըղայութեան ժամանակնին, կնոջ ընկերութեանը պատրաստըված ըլլան. այսինքն դեռ չը կարգըված՝ Բարի հօր մը, եւ մօր մը պաշտօնը գիտնան : Քանի որ դաստիարակութիւնը այս նպատակը չունի՝ ամուսնութիւնը իր յարգը չը գտներ, եւ ինչպէս որ կը տեսնենք, իբր նպատակէն բոլորովին կը հեռանայ :

Այս օրվան օրս ընդհանրապէս համոզված են, որ ամուսնութիւնը մարդուս կիրքերը հանդարտեցնելին

ուրիշ նպատակ մը չունի . Եւ հետե-
ւաբար՝ կիները կիրքերնուս ջնջին
խաղալիքը համարված են . անանկ
որ ամեն մարդ կարգըվելու ժամա-
նակ գեղեցկութիւն Եւ հարստութիւն
կը փնտռէ . իբրեւ թէ գեղեցկութիւ-
նը Եւ հարստութիւնը , մարդկային
հանգամանքներէն ամենէն գերա-
զանցն են :

Ի՞նչ է ասոր հետեւանքը :

Ասոր հետեւանքը խիստ ծանր
է , Եւ բոլոր այր ու կնոջ գանգաւ-
ները անկէ առաջ կուգան :

Որովհետեւ կինը , կիրքերնուս ո-
ջինջ խաղալիքը կը սեպենք , Եւ
կարգըվելու ժամանակնիս անցողա-
կան հանգամանքներ կը փնտռուենք
կնոջ վրայ , այսինքն գեղեցկութիւն
Եւ հարստութիւն՝ մեր հանգստու-

թիւնն այ (թէ որ այն այ հանգստութիւն սեպվի) հագիւ թէ տարի մը կը տեւէ : Ինչու որ կիրքերնիս կը ճանճրանան , գեղեցկութիւնը կ'անցնի կ'երթայ , հարստութիւնը կը փրճանայ , ու ձեռքերնիս կը մնայ զգուելի եակ մը որ անկէ ետեւ , հագիւ թէ քովերնիս ծառայի մը կամ գերիի մը յարգ կրնայ ունենայ :

Իեղն տեսարան . . . որ այս նըպատակով բոլոր կարգըվողներուն տանը մէջ , օր մը չէ նէ օր մը պիտի տեսնըվի :

Վա՛յ այն զաւկներուն որ ասանկ տեսարաններու մէջ կը մեծնան :

Սակայն կրթեալ մարդը , միայն իր կիրքերը յագեցընելու համար չը կարգըվիր . այլ կինը , իրեն ընկեր

տունելով՝ զաւկի տէր ըլլալու եւ
պարկէշտ ընտանիք մը կազմելու
համար՝ ուր ամեն իրիկուն իր ու-
րախութիւնը , հանգստութիւնը եւ
մխիթարութիւնը կը գտնէ . որովհե-
տեւ գիտէ որ մարդկային պաշտօ-
նը ամուսնութենով ընտանիքին մեջ
կը շատնայ , եւ այն ճշմարիտ սե-
րը որ իր սրտին մեջ ունի՝ միշտ
գինքը իր ընկերին եւ զաւկըներուն
կը մօտեցընէ :


Իր կինը կը պատուէ , որովհե-
տեւ անոր ընկերութիւնովը իր մը-
խիթարութիւնը գտաւ : Ընտանիքին
համար կ'աշխատի , միշտ անոր
բարիքը կը փնտրուէ , անոր համար
իբր անձը վտանգի մեջ կը դնէ եւ ա-
նոր համար կը մեռնի :

Այն Աստուածը՝ որ ինքը կը ճան-

չէ ու կը սիրէ՝ կ'ուզէ որ իր ընտա-
նիքն այ ճանչէ ու սիրէ . որովհե-
տեւ զիտէ որ բոլոր բարիքները որ
իւր կ'զգայ՝ միայն անկէ կուգան .
անոր համար առտու իրիկուն , իր
ընկերը եւ զակերները բոլորտիքն
առած , եւ աչքերը դէպ 'ի երկինք
վերուցած՝ փառք կուտայ Արարչին,
ՀԱՅՐ ՄԵՐ ըսելով :

Ահա ամուսնութիւնը եւ ընտա-
նիքը :

Երանի այն զակերներուն որ ա-
սանկ տեսարաններու մէջ կը մեծ-
նան :



Զ. ՔԼՈՒԲ

ԾԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ՀՕԲ ՄԸ ԵՒ ՄՕԲ ՄԸ ՊԱՐՑՔԵՐԸ

Որ եւ իցե գեշութեան մը , կամ վնասի մը առջեւն առնելու համար՝ պետք է ամենէն առաջ , անոր աղբիւրը կամ արմատը գտնել , ու հոնկէ այն գեշութիւնը կամ վնասը բնաջինջ ընել : Թե չե՛ այն գեշութիւնը միշտ կը շարունակէ , ու բոլոր աշխատութիւննիս պարապը կ'ելնէ :

Հետեւաբար՝ մարդկային ցեղին

մեջ եղած անկարգութիւնները վեր-
ցընելու համար, պետք է այն ան-
կարգութիւններուն ուրիշ գալը փրն-
տըռել. այսինքն անոնց աղբիւրը
գտնել :

Ո՞րն է մարդկային ցեղին աղ-
բիւրը կամ արմատը :

Մարդկային ցեղին արմատը ըն-
տանիքն է. որովհետեւ առանց ըն-
տանիքի մարդկային ցեղ չը կրնար
ըլլալ :

Ուրեմն թէ որ ընտանիքին մե-
ջէն անկարգութիւնները վերցընենք
նե՛ մարդկային ցեղին մեջէն ալ վե-
րուցած կ'ըլլանք : Բայց հոս ընդ-
հանրապէս կը խօսիմ, ու պետք է
որ ընթերցողն ալ անանկ հասկընայ.
Թէ ճէ ըսածս ուղիղ չէր ըլլար :

Ընտանիքը կարգաւորելու կամ

քաղաքակրթելու պաշտօնը՝ մայրերուն և հայրերուն ձեռքն է. որովհետեւ ընտանիքին գլուխը և մեծը իրենք են :

Ընտանիքը՝ Ովկիանոսի մեջ ճամբորդութիւն ընող նաւի մը կը նմանի, որուն նաւապետը հայրն ու մայրն են. ղեկը նաւապետին ձեռքն է, ուստի նաւին կանոնաւոր ընթացքը՝ անոր վարպետութենէն կախում ունի: Միշտ պետք է արթուն ըլլայ փոթորիկին և այեկոծութեան գայուն վրայ, ու իր նաւը անոր համեմատ գործածէ. թէ չէ՛ անոնց զոհ կ'ըլլայ ու իր նաւը կը կորսնցընէ :

Հայրերուն ու մայրերուն պարտքերը՝ ընտանիքին ղեկ են, և անոնց կատարեալ գործադրութենէն

կախում ունի ընտանիքին բարի
նպատակը :

Ո՞ր է այն հայրը եւ մայրը
Ազգերնուս մեջ , որ այն սուրբ
պարտքերը գիտնայ ու պարկեշտ
ընտանիք մը կազմէ :

Խիստ քիչ կը տեսնեմ :

Հայրը՝ իր ժամանակին մեծ մա-
սը ընտանիքին հետու կ'անցը-
նէ : Մայրը ընդհակառակն ամեն
ժամանակ ընտանիքին մեջն է : Ա-
ռաջինը ընտանիքին հայրը կը վաս-
տըկի , երկրորդը տղայոց հոգին
կ'արթնցնէ ու Աստուծոյ սէրը կը
դնէ անոնց սրտին մեջ :

Հայրը՝ Ազգը կը ներկայացընէ .
մայրը՝ ընտանիքը . որովհետեւ ամեն
իրիկուն հայրը՝ դուրսի տեսա-
ծը կամ լսածը կը պատմէ , եւ մայ-

ըն ալ ընտանիքին մէջ եղածները :

Սակայն բոլոր այս խօսակցութիւններուն մէջ աղեկը միշտ գեշեն գատելով՝ բարի եղելութիւնը յարգելի ցուցունելու է , եւ գեշը անարգելի , որ տղաք աղեկը պատուեն ու գեշը անարգեն :

Ամեն ժամանակ , հայր եւ մայր իրենց բարի վարմունքովը , օրինակ պիտի ըլլան գաւկըներնուն . որովհետեւ խրատական խօսքերը առանց գործադրութեան ամենեւին չեն ազդեր անոնց :

Առաքիւնութիւնը դաս տալով չը սորվըվիր , այլ տեսնելով :

Յիրաւի , ի՞նչպէս տղայ մը գեշ կրնայ ըլլալ , թէ որ բոլորտիքը միշտ բարիք տեսնէ : Ի՞նչպէս անվայել վարմունքի տէր կրնայ ըլլալ ?

թէ որ մայրը միշտ պարկեշտ ըլլայ .
ի՞նչպէս աղքատը չը սիրեր՝ թէ որ
մայրը աղքատասէր ըլլայ . ի՞նչպէս
գոռոզ է հպարտ կրնայ ըլլալ՝ թէ
որ մայրը խոնարհ ըլլայ . ի՞նչպէս
աշխատասէր չ'ըլլար՝ թէ որ միշտ
մօրը աշխատիլը տեսնէ . ի՞նչպէս
անհաւատ կրնայ ըլլալ՝ թէ որ առ-
տու իրիկուն իր մօրը է հօրը Աս-
տուծոյ փառք տալը է աղօթելը
տեսնէ :

Անշուշտ տղայ մը սատանայ
ծնած ըլլալու է , որ ասոնք տեսնե-
լէն էտքը գեշ ըլլայ :

Օրին մեկը բարեկամներուս մե-
կին հետ ընտանեկան ընկերութեան
մը հրաւիրված ըլլալով՝ կերակու-
րէն էտքը , ժամանակիս զբօսանք-
ներուն է գոհարճութիւններուն վը-

րայ խօսք բացվեցաւ :

Տունին մեծը , որուն կինը է գաւկըները ներկայ էին՝ սկսաւ պարծենալով իր երիտասարդութեան ժամանակը ըրած գուարճութիւններուն , կամ աւելի ճիշդ խօսելով , մոլութիւններուն անամօք նկարագրութիւնն ընել :

Խեղճ մարդը՝ այնքան հայրենական է ընտանեկան պարտքերը ջր գիտեր որ՝ մեծ առաքինութիւններու պատմութիւնն ընող մեկի մը պէս ամեն բան իր անունովը է տեղն՝ ի տեղովը կը պատմեր :

Իր կինը է գաւկըները ուշադրութեամբ մտիկ կ'ընէին , է կարելի է որ ասանկ հայր մը իրենց պարծանք կը համարէին : Սակայն՝ էս կ'ուզէի որ այն միջոցին ականջ-

նին խուլնար ու այս խայտառակ
պատմութիւնը չըլսէին :

Ուրիշ գեշ սովորութիւն մ'ալ կը
տեսնեմ ընտանիքներու մէջ, որուն
հետեւանքն ալ աղետալի է :

Շատ հայրեր եւ մայրեր, անա-
մօթ եւ խայտառակ երգեր բերներ-
նուն ջեն ձգեր, եւ մինչեւ անգամ
իրենց զաւկըներնուն ալ սովրեցը-
նելով՝ զուարճութեամբ մտիկ կ'ը-
նեն ու ընկերութիւններու մէջ եր-
գել կուտան : Այն անմեղ մանուկ-
ներուն բերանը, աղօթք մը այնքան
բերկրալի չ'երեւար՝ քան թէ այն
երգերը :

Ի՞նչ կրնայ սպասվիլ ասանկ օ-
րինակներ առնող տղաքներէն :

Այն՝ որ հիմայ մտիկ կ'ընեն կամ
կը տեսնեն՝ վաղը գործքի պիտի դը-

ճէն :

Ո՛վ հայրեր ու մայրեր , բնաւ
մի գանգոտիք այն ժամանակ ձեր
գաւկըներուն գէշ վարմունքին վը-
րայ . ինչու որ պգտիկութեան ժա-
մանակնին , մոլութեան փոսին ճամ-
բան դուք ցոյց տային ետքը , զար-
մանայի չէ որ չափահասութեան
հասած ատեննին ինքնիրեննուն
ցարկէն մեջը :



Է. ԳԼՈՒԽ

ԱՆԴՐԱԴԱՐՉՈՒԹԻՒՆ

ՆԱԻԸՆԹԱՅ ԳԼՈՒԽՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ
ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՂԶԻԿՆԵՐՈՒ

Նախընթաց գլուխներէն կը հետեւի, թէ մարդուս բարի կամ չար ըլլալուն գլխաւոր պատճառը՝ կիներն է :

Իր մայրը, իբր սիրահար է իբր ամուսին կը ներգործէ ու կ'իշխէ մեր վրայ՝ մեր օրացեն մինչէ մեր գերեզմանը :

Կիները ինչ որ ըլլան, մենք ալ

քիջ շատ անոնց պէս կ'ըլլանք . է-
թէ լուսաւորեալ են , հաւատով ,
բարեպաշտ եւ առաքինի' կրօնա-
սեր ու բարի կ'ըլլան մարդիկ ալ .
իսկ էթէ տգետ , անգութ ու մոլի ըլ-
լան' չարագործ ու գազան կ'ըլլանք
մենք ալ :

« Կնոջ ձեռքով կը գրէ բնութիւ-
թիւնը մարդուս սրտին մէջ » :

Կնիկներուն ձեռքն է մարդկա-
յին ազգին ապագան :

Ուստի էթէ կ'ուզենք որ մենք
կամ մեր սերունդները բարեկիրք ու
բարեկրօն ըլլան' կրթենք կիները .
կրթենք ազգին աղջիկները , որ ա-
տենով ամուսին ու մայր պիտի ըլ-
լան գալիք սերունդներուն :

Ս'ինչեւ որ խնամ ջունեանք ա-
նոնց դաստիարակութեանը' բան մը

ջապատենք մանջերուն տրված դաստիարակութենէն :

Վասն զի եթէ յաջողինք այ մանջերոս բարեկարգ դպրոցներ ունենայ, ատով շատ շատ իմաստակներ կ'ունենանք . մանտրտիկ Արիստոտելներ, առանց սկզբունքի, առանց բարոյականի, պզտիկ շատագետներ, որ բանի մը ջէն հանիր, ամէն բան կը ծաղրեն եւ իրենք զիրենք միայն կը պատուեն :

Հրահանգ շատ, դաստիարակութիւն բնաւ :

Դաստիարակութիւնը, որ սրտի կրթութիւնն է, եւ մարդոս համար ամենէն կարեւոր բանը՝ երեսի վերայ ձգված, բոլորովին մոռցըված :

Ասոր հետեւանքները աղետալի կ'ըլլան :

Միայն մարդուս միտքը կրթեցիր՝ գերագոյն իմացականութիւններ կրնաս ունենալ . այո՛ , այսինքն գերագոյն կենդանիներ , բայց ոչ երբէք բարի մարդեր , եւ այն ատեն կ'ըլլայ յետինն չար՝քան զառաջինը :

Մեծն Նաբոլեոն օր մը տիկին Քամբանին կ'ըսէր թէ « դաստիարակութեան հին դրութիւնները բան մը չեն արժեր . ի՞նչ պետք է որ երիտասարդները բարի դաստիարակութիւն առնեն » :

« Մայրեր » , պատասխանեց տիկին Քամբան :

Այս խօսքէն զարնըվեցաւ կայսրը . « լաւ » ըսաւ . « անա դաստիարակութեան բովանդակ դրութիւն մը : Պետք է , տիկին , որ մայրեր հասցընես , զի զակընէդ մեծցընէլ

գիտնան » :

ՄԱՅՐԵՐ , կը գոչենք մենք ալ ազգին , սաստիկ համոզված ըլլալով՝ թէ անոնց ձեռքն է միայն մեր ազգին ալ ապագան :

Անո՛նք կրնան ներշնչել վստահական խորհուրդներ, անճանոսիրոմներ , նահատակութիւններ , մեծամեծ քաջութիւններ ու մեծամեծ առաքինութիւններ . անո՛նք կրնան հասցընել հայրենասէրներ , Կռարներու պէս , դիւցազուններ՝ Նաբոլեոնի պէս ու առաքինիներ Սոկրատի պէս :

Հազարաւորներուն մեջէն մեկ հատիկ օրինակ մը բերենք մայրական ազդեցութեան վրայ :

Կորիոյանոս Հռոմայեցին մեծամեծ ծառայութիւններ մատուցած էր

իր հայրենեացը , ու իր քաջութեամբը քանիցս վտանգէ փրկած էր զանի :

Ասոր փոխարեն՝ ապերախտութիւն հատոյց իր հայրենիքը՝ Է. Հռոմէն արսորվեցաւ Կարիոյանոս :

Իր մեծ հոգին չը կրցաւ հանդուրժել այս աստիճան վաստօրեան ու ապերախտութեան , ու իր հայրենեաց կործանմանը մեջ կարծեց գտնել իր արժանի վրեժխնդրութիւնը . զի անիրաւութիւնը ու ապերախտութիւնը՝ ամենէն վսեմ հոգիներն անգամ , ամենէն քաջ սիրտերն անգամ կ'ապականեն . . . :

Իր հայրենիքէն վրեժ առնելու սոսկալի եռանդովն լըցված՝ զնաց միացաւ Հռոմի բշնամիներուն հետ , որոնք մեծ սիրով ջն-

դունեցին Հոռմի արտորեայ գօրապետը :

Հոռմայեցւոց քաղաքները ջը դիմացան Կորիոյանոսի առջեւ , եւ թշնամուն բանակը մինչեւ Հոռմի դուռը հասաւ :

Քիչ էր մնացած , որ Կորիոյանոս իր փափաքին կատարմանը հասնի , ու վրեժխնդրութեան բոցովը վառված սիրտը պաղըշկեցընէ :

Հոռմ յուսահատ վիճակի մը մեջ քանիցս իր երեւելիներէն ու քրմապետներէն , խումբ խումբ կը խըրկեր ներում խնդրելու Կարիոյանոսէն եւ աղաչելու որ ջը կորսընցընէ իր հայրենիքը :

Աղաչանք , խոստմունք , այ բան մը ջեր կրնար գօրապետին սիրտը իջեցընէլ : Սակայն կար մեկ գօրու-

թիւն մը , որո՛ւն միայն պահված էր
անոր սրտին յաղթէ :

Կորիոյանոսին մայրը Էկա-
վերջապէս՝ իրմէ հայրենեաց ազա-
տութիւնը խնդրէր . . . :

Այն քարէն ալ ամուր գրահաւոր
սիրտը կակրոցաւ մօր մը արտասու-
քին առջէս :

« Հայրենիքդ փրկեցիր , որդիդ
կորսընցուցիր » ըսաւ Կարիոյանոս ,
վերցուց պաշարու՛մը , ինքն ալ հը-
րամայած թշնամոյն բանակին ձեռ-
քը ջարդութեանը եղաւ :

Ո՛վ սուրբ գօրութիւն . մարդիկ
ի՛նչպէս քեզ ջէն ճանչած . դու այս
աշխարհին զըսպանակն էս , եւ մար-
դիկ քեզ կ'արհամարհեն մինչէս այս
օր : Քու կանգմանդ ու փառքիդ
օրը , պիտի ըլլայ մարդկութեան

վերածընդեան օրը :

Կիներուն մեջ Ամենասուրբ կոյս
մը ծնաւ աշխարհի Փրկիչը : Կինե-
րու ճեռքով պիտի յաջողի ու պը-
սակվի մարդկութեան փրկութիւ-
նը . . . :



Բ. Մ Ա Ս

ՀՈԳԻԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻԻՆԸ

Ը. ԳԼՈՒԽ

**Մ Ա Ր Դ Ո Ւ Ս Ե Ր Կ Ո Ւ Տ Ե Ս Ա Կ
Զ Գ Ա Ց Ո Ւ Մ Ն Ե Ր Ը**

**Ա Յ Ս Զ Գ Ա Ց Ո Ւ Մ Ն Ե Ր Ը Ի Ր Ա Ր Մ Է
Զ Ա Տ Ե Լ Ո Ւ Վ Տ Ա Ն Գ Ը**

Եթէ կենդանիներուն բոլոր շարժումները եւ սովորութիւնները ուշադրութեամբ քննութեան տակ դրնէյու ըլլանք, կը տեսնենք որ մի-

միայն նիւթական նպատակ մը ունին . իրենց տեսակին պահպանութիւնն ու աճումը : Ախորժակնին կամ կիրքերնին հագեցընելէն ետքը՝ կը հանգստանան կամ կը քնանան :

Այս բնական գիծը՝ իրենց բոլոր մտածութիւններնուն եւ գործողութիւններնուն պատնեշն է , ու մաս մը անդին չեն կրնան անցնիլ :

Սակայն մարդս այս գիծը եւ պատնեշը չը ճանչէր , ու ախորժակը եւ կիրքերը յագեցընելէն ետքը , անդադար կ'ուզէ , կը խնդրէ ու կ'ըզգայ :

Ի՞նչ կը խնդրէ , ի՞նչ կ'զգայ :

Կը խնդրէ՝ ինչ որ կենդանին չը կրնար խնդրել . կ'զգայ , ինչ որ կենդանին չը կրնար զգայ :

Աստուած եւ յաւիտենականու-

քին :

Ուրեմն , մարդոս մեջ երկու ըզգացում , կամ մաս կայ : Նիւթականը եւ մտաւորականը , կամ մարմնաւորը , Աշխարհային զգացում . հոգեւորը՝ երկնային զգացում :

Առաջինը մահ , երկրորդը անմահութիւն :

Ասով , մարդս կենդանիներէն գերազանց կ'ըլլայ . ասով մարդս աշխարհքը երկինքին միացընող կապը կ'ըլլայ , ասով մարդս աշխարհիս վրայ կը թագաւորէ , ու անոր բարիքները կը վայելէ :

Քանի որ մարդս իր այն երկու զգացումները ամբողջ պահէ՝ իր գերազանցութիւնն ալ կը տեսնու . Արարչին տրված արտօնութիւնները կը վայելէ :

Բայց թէ որ այն զգացումներուն
մեկը խափանելով, միւսը յարգելի
բռնելու ըլլայ, ինքն ալ իր աթո-
ռէն վար կ'իջնէ, իր գերազանցու-
թիւնը կը կորսընցունէ. եւ մարդու-
թենէ դուրս կ'էլնէ, կամ աւելի
ճիշդ խօսելով, մարդու կերպարան-
քով անանուն էակ մը կ'ըլլայ :

Ուստի մարդս իր ամբողջութեա-
նը չը կրնար դպչիլ՝ առանց աշ-
խարհիս խաղաղութիւնը եւ հան-
գըստութիւնը արելու :

Այս օրվան օրս մարդոց վրայ
տեսնըված անկարգութիւնները՝ այս
երկու զգացումներուն բաժանման
գեղ հետեւանքին ապացոյց մը չեն :

Յիրարի, ի՞նչ կը տեսնենք բո-
լորտիքնիս, մեր վրայ, մեր մեջը,
մեկ խօսքով՝ ամեն տեղ :

Միայն մեկ բան մը . որ բոլոր աշխարհքիս վրայ կը տիրէ : Հարստութեան փափաքը , ոսկիին սէրը :

Հարստութեան համար կը ծնին . հարստութեան համար կ'ապրին , հարստութեան համար կ'աշխատին եւ կը մտածեն , հարստութեան համար մեկգմեկ կ'ամբաստանեն եւ կը մեռցնեն :

Մարդս այս կէտը հասածին պէս՝ Արարչին ստեղծած այն ամբողջ եւ գերազանց մարդութիւնը կը կորսընցնէ . մարդու կերպարանքով այն անանուն էակը կ'ըլլայ , որ իր հոգեւոր զգացումները , ոտքի տակ առնելով՝ միայն մարմնաւոր . զգացումներու կը հնազանդի : Երկինքը մեկդի կը բողոս , ու աշխարհքիս ոջընչութեանը կը կապվի :

կը մնայ : Իր Աստուածը եւ յաւիտենականութիւնը կը մոռնայ , առաքիլութեան եւ մարդասիրութեան սուրբ անունները ամեն տեղէն կ'աւրէ կը սկըրդէ՝ ու անոնց տեղ , հարցատութիւն եւ անճնական շահ բռնութիւն կը գրէ :

Այն ատենը երկնային լոյսը իր վրայէն աներեւոյթ կ'ըլլայ , ու կը մնայ անդին , մութ , խաւար եւ ոջընջութիւն :

Ի՞նչ ընելու է այս խաւարը փարատելու համար . ի՞նչ ընելու է անասնութենէն դարձեալ մարդկութեան կարգը ելնելու համար :

Մեր երկու մասը , մեր երկու եռութիւնը , մեկգմեկէ ջը գատել , ու մարմնաւոր մասին հետ , հոգեւորն ալ կրթել ու զարդարել :

Ասոր հակառակ վարվիլը , Արարչին կամքին դեմ է :

Արարչին կամքին դեմ է կ'ըսեմ , որովհետեւ մարդս անոր տրված ամբողջութիւնը քակելու իշխանութիւնը չունի : Մինակ մահն է այս իշխանութեան տերը , որ մարդուն երկու մասը զատելով մարմնաւորը աշխարհիս կը թողու եւ հոգեւորը երկինք կը դարձընէ :

Ուրեմն անոնք որ այս երկու եւթութիւններուն մէկը կը խափանեն՝ մարդկութեան դահիճը կ'ըլլան , ու բնական մահը չեկած՝ անբնական կերպով մարդս կը մեռցընեն :

Նորէն կ'ըսենք , մարդս հոգի ու նիւթ կամ մարմին ըլլալը Աստուծոյ կամքն է . պետք է որ քանի որ աս աշխարհիս վրայ ենք՝ եր-

կոնքն իրարու հետ համաձայն եր-
թան :

Մարդս էթէ միայն նիւթին պետ-
քերուն ծառայէ՝ նիւթ կը կտրի, այ-
սինքն մարմինին գերի կ'ըլլայ ու ա-
նասուններուն կարգը կ'իջնէ . բայց
մարդս անասուն ստեղծված չէ :

Եթէ նիւթը մոռնալով, բոլորո-
վին հոգի կտրի՝ ատիկայ այս աշ-
խարհիս համար չէ, եւ ան ալ իր
անստեղծութիւններն ունի . որովհե-
տեւ մարդս հրեշտակ ստեղծված չէ :

Մարմինին զգացումներուն ա-
մենն ալ յատուկ դիտմամբ են եւ զա-
նոնք չը կրնար մարդս խափանել
ու մեռցնել՝ առանց աշխարհիս
կարգն ու կանոնը խանգարելու :
Մարդուս տրված չէ Աստուծոյ գոր-
ծը սրբագրել : Բայց կրնայ եւ պար-

աի մարմինին ցանկութիւններուն
 չափ ու կանոն մը դնել : Այս չափն
 ու կանոնն այ բնութիւնը աղէկ կը
 ցուցնեն :

Բնութիւնն է որ մեզ կը հրաւի-
 րէ մեր մարմինին պետքերը լեցը-
 նելու , անօթութեամբ , ծարաւով
 եւայլն եւայլն . բայց կշտացումը
 չափ դրած է : Ով որ այս չափէն
 անդին կ'անցնի , դժնդակ հետեւանք-
 ներու մատն կ'ըլլայ : Զոր օրինակ,
 չափազանց ուտելուն հետեւանքն է,
 անմարսութիւնը եւայլն :

Ով որ գիտէ ու կրնայ ամեն
 բանին մեջ տեղը գրտնել ու բըռ-
 նել երթալ՝ անիկայ Աստուծոյ հրա-
 մանը կը կատարէ որ յայտնի կեր-
 պով գրված է բնութեան ու Աւե-
 տարանին մեջ :

Այս կերպով վարվող մարդն է ,
մարդ կատարեալ :

Բ • Գ Լ Ո Ւ Բ

ՀՈԳԻ

Այս գրքին մեջ մինչեւ հիմայ ,
շատ տեղ հոգիին անունը յիշեցինք ,
ու ըսինք որ անոր զգացումներուն
գործադրութեամբը , մարդս իր Աստ-
ուածային ամբողջութիւնը պահած
կ'ըլլայ , ու իր աշխարհային պաշ-
տօնը ճիշդ կը կատարէ : Սակայն
հոգիին վրայ դեռ տեղեկութիւն մը

չը տըվինք ու անոր էութիւնը չը
հաստատեցինք :

Աշխատինք ուրեմն հոս այս փա-
փուկ խնդիրը լուծելու :

Ամեն մարդ 'ի հարկէ ինքնիրե-
նը սա հարցմունքը ըրած է . « Ի՞նչ
է հոգին » :

Մարդուս հորիզոնէն դուրս բան
է հոգին ի՞նչ բան կամ նիւթ ըլլա-
լը հասկընալ :

Այն իմաստասերներն, որ այս մա-
սին վրայ երկար բարակ խորհրդա-
ծութիւններ ըրած են՝ խնդիրը լու-
ծելու պատիւը չեն ունեցած . այլ
աւելի խառնակութեան տակ ձգած
են: Ուստի կը համարձակիմ ըսելու,
որ բնաւ մեկը չը կրնար այս խն-
դիրը լուծել . ինչու որ հոգին Աստ-
ուծածովն է բան մը ըլլալով՝ անոր

ինչ բան կամ նիւթ ըլլալը քննութեան տակ դնելը, Աստուծոյ ինչ բան կամ նիւթ ըլլալը քննելու կը նմանի :

Փիտեճք, կը հաստանք, որ Աստուած մը կայ . որովհետեւ բոլոր մարդկութեան ազգին առջեւ բացված այն սքանչելի գրքին մէջ, այսինքն բնութեան մէջ, մեզի տըրված Աստուածային լոյսովը, իր առանց կը կարդանք . բայց կրնա՞նք քննել եւ հասկընալ անոր ինչ բան կամ նիւթ ըլլալը : — Ոչ :

Ամեն տեղ եւ ամեն բանի մէջ զինքը կ'զգանք, բայց չենք կրնար տեսնել : Իր Նախախնամութիւնը ուզեց, որ մարդս մինակ զինքը ըզգայ ու չը տեսնէ :

Անոր պէս ալ գիտեճք, որ կ'ըզգ



գանք որ մարդս հոգի մը կամ Աստուածային զօրութիւն մը ունի մեջը՝ սակայն ջէնք կրնար անոր ինչ բան ըլլալը հասկընալ ու քննել, որովհետեւ Աստուածային բան մըն է :

Ըսել է թէ ինչպէս որ Աստուծոյ էութիւնը մեր հոգիովը կ'զգանք ու կը գտնենք՝ անանկ ալ հոգիին էութիւնը , իր զգացումներովը կը գտնենք :

Փնտրուենք ուստի մարդուս մեջ այս զգացումները , ու անոնցմէ հոգիին էութիւնը հաստատենք :

Այս նպատակիս հասնելու համար՝ պէտք է որ մարդը կենդանութեան քով դնելով՝ ուշադրութեամբ անոնց հետ բաղդատեմ . ու այս բաղդատութիւնովս՝ մարդուն կենդանիներէն արելորդ ունեցած զգա-

ցումները գտնեմ :

Մարդս կը մտածէ . կ'զգայ , կը յիշէ , կը բաղդատէ ու կ'ուզէ :

Երկար քննութենէ մը ետքը կը տեսնենք որ կենդանիներուն շատերըն այլ կը մտածեն , կը յիշեն , կը բաղդատեն ու կ'ուզեն :

Տունիս փոքրիկ շունը , այս բաժնէրուս օրինակ կրնամ բերել :

Ամեն իրիկուն զիս տեսած ժամանակը կը վազէ դեմս կ'էլնէ , ու զգացած ուրախութիւնը պոչը երերցընելով , ցաթկըռտելով եւ հագար ու մէկ շարժումներով կը յայտնէ . թէ որ տրտում ըլլամ , ինք այլ կը տըրտմի ու առանց շարժումնքի քովս կը նստի . թէ որ ուրախ ըլլամ , ինք այլ ուրախ շարժումներ կ'ընէ :

Քնայ կ'ըսեմ , կ'երթայ . Եկու

կ'ըսեմ , կուգայ :

Թե որ պատահմամբ յանցանք մը գործելու ըլլայ՝ ուտելիք ծեծը առաջուց գիտնալով՝ պոչը կախած ու խեղճուկ կերպով մը , կ'երթայ տունին մէկ կողմը կը պահվըտի : Անունը կուտամ , կը կանչեմ , բայց չը գար , կ'ելնեմ կը փնտրուեմ , ու երբոր գտնեմ՝ աղաչելով ու գետնին վրայ սողալով՝ կուգայ ոտքերուս առջեւ կըյնի , կը քծնի , կը լզվըտտի ու իր յանցանքին ներում կը խնդրէ . թե որ ներելու ըլլամ՝ իր շնորհակալութիւնը հագար ու մէկ կերպերով կը յայտնէ , կ'ուրախանայ ու կը ցափկըտէ :

Արդեօք շունին այս գործողութիւններուն մէջ , մտածութիւն , յիշողութիւն , բաղդատութիւն եւ կա-

մեցողութիւն չը կայ մի :

Թե որ չը կայ, ի՞նչպէս իր յանցանքը կը գիտնայ ու ծեծեն ազատելու համար առանձին տեղեր կը պահվըտի . թե որ մտածութիւն չը կայ, ի՞նչպէս ոտքերուս պլլըվելով ներում կը խնդրէ :

Այս գործողութիւններուն մեջ անշուշտ մտածութիւն կայ . մտածութիւն եղածին պէս՝ յիշողութիւն ալ կ'ըլլայ, յիշողութիւն եղածին պէս՝ բաղդատութիւն ալ կ'ըլլայ : Հետեւաբար, մտածութիւն, բաղդատութիւն եւ յիշողութիւն ունեցող կենդանին ալ՝ կ'զգայ ու կ'ուզէ :

Բայց պիտի ըսեն թէ, մարդուս տրված կրթութիւնովն է որ շունը այս կատարելութիւնը կ'առնէ : Ասոր ալ կը պատասխանեմ, որ ան-

շուշտ շունը այս կատարելութեան՝
սկզբունքն ունի եղեր իր մեջը, որ
կրթութիւնով կատարելութեան հա-
սեր է, ու հիմայ կը մտածէ կը յի-
շէ ու կը բաղդատէ: Թէ որ իր մե-
ջը այս հանգամանքներուն եռթիւ-
նը չըլլար՝ ինք ալ այս կատարելու-
թիւնը չէր ստանար: Բայց անց-
նինք՝ տունին շունէն ոչխարներուն
պահպանութիւն ընող շուներուն:

Ֆրանսայի մեջ, այս շուները ի-
րենց խելացութեամբը հովիւներուն
շատ օգտակար կ'ըլլան, ու հովիւը,
ոչխարներուն դուրս ելած է. արած-
ված ժամանակը՝ բնաւ բանի մը չը
խառնըվիր: Շունն է հովութիւն
ընողը է բոլոր հօտին վրայ հսկողը:

Մեծ ճարպիկութեամբ է. արա-
գութեամբ հօտին բոլորտիքը կը պը-

տըտի , աչքը չորս կողմը տնկած
ոջխարներուն շարժումը կը դիտէ :
Թէ որ անոնցմէ մէկը հօտէն գատ-
վի կամ հեռանայ՝ շուտով կը վա-
զէ ու միւսներուն կարգը կը խօթէ :
Յորէնին արտը կը ճանչնայ ու չը
բողոք որ ոջխարները մէջը մըտ-
նեն : Թէ որ պատահմամբ մէկը հոն
մտնէ , կը վազէ ու անկէ դուրս ել-
նելու կը հրաւիրէ . թէ որ ջեյնէ՛ այն
ատեն պատժելով հնազանդութեան
կ'ստիպէ : Իրիկունը երբոր ոջխար-
ները իրենց տեղը դարձընելու ժա-
մանակը գայ՝ հովիւը իր շունին նը-
շան կուտայ ու շունը կ'սկըսի ոջ-
խարները առաջ քշել . բայց միշտ
իբր ճարպիկ կարգաւորութեամբը :
Հիմայ այս շունին գործողու-
թիւններուն մէջ մտածութիւն չը

կա՛յ :

Այս բաներն, որ մենք մտածութիւնով, յիշողութեամբ, եւ բաղդատութեամբ կ'ընենք՝ թէ որ կենդանիներն ալ ընեն նե՛ ըսել է որ ա՛նոնք ալ մտածելով յիշելով եւ բաղդատելով կ'ընեն :

Թէ որ մեր քննութիւնը շունին վրայեն՝ գայլին, աղուհսին, կապիկին, վայրենի կենդանիներուն եւ թռչուններուն վրայ տարածենք՝ ա՛նոնց քով ալ կը գտնենք մտածութիւն, յիշողութիւն եւ բաղդատութիւն : Սակայն աւելորդ կը համարենք, այս քննութեան մեջ մտնել, մեր գործքը չընդարձակելու համար :

Աս ըսածներէս կը հետեւեցնեմ, որ մտածութիւնը, յիշողութիւնը,

բաղդատուքիւնը եւ կամեցողութիւ-
նը հոգիին սեփականացընող ի-
մաստասերները՝ մեծ կերպով սը-
խալած են . որովհետեւ այն ժամա-
նակը կենդանիներն ալ մեզի պէս
հոգի մը ունեցած պիտի ըլլային ու այն
հոգին ալ մերինին պէս անմահ ըլ-
լալու էր . որ խելքի եւ բանակա-
նութեան դէմ բան է :

Այն զգացումներն , որ մարդուս
հետ մեկտեղ կենդանիներն ալ ու-
նին՝ մարմնաւոր զգացումներ են ,
եւ ոչ թէ հոգեւոր :

Մեր բաղդատութեան մեջ մին-
ջեւ հոս , ինչ որ մարդուս վրայ
գտանք՝ կենդանիներուն վրայ ալ
գտանք , միայն սա տարբերութեամբ
որ մարդուս անդամները եւ զգա-
լարանքները կենդանիներէն անելի

համեմատեալ, եւ գործարանները ա-
ռելի կատարեալ ըլլալուն՝ ոյն զգա-
ցումները մարդուն վրայ առելի ըն-
դարձակ կերպով կը տեսնենք :

Սակայն մարդուն վրայ, մտա-
ծութենէն, յիշողութենէն, բաղդա-
տութենէն եւ կամեցողութենէն ու-
րիշ բանմը չը կա՞յ :

Չը կա՞յ անանկ բան մը, որ շատ
անգամ մեր մարմնաւոր մտածու-
թիւններուն եւ զգացումներուն դէմ
դնէ :

Չը կա՞յ անանկ բանականութիւն
մը, որ մարմնաւոր շահը ոտքի
տակ առնէ :

Չը կա՞յ անանկ զգացում մը, որ
նիւթական պատեղը անցնելով,
մինչեւ երկինք բարձրանայ, ու
հոն իր Արարիչը եւ յաւիտեանակա-

նութիւնը գտնէ :

Զը կա՞յ անանկ զգացում մը , որ աշխարհքիս վրայ չը գտնըված այն ճշմարիտ գեղեցկութիւնը փնտրուէ :

Զը կա՞յ անանկ բարոյական ըզգացում մը , որ բոլոր գեշ կամքերուն դէմ դնէ :

Զը կա՞յ վերջապէս՝ խղճմտանքն , որ գեշը եւ աղեկը մեզի ցոյց տայ :

Այս զգացումներն որ կենդանիին վրայ ջեմ գտներ , հոգիին զգացումներն են . եւ որովհետեւ մարդս այս զգացումները կ'իմանայ իր մեջը՝ ըսել է որ իր մեջն ալ հոգի մ'ունի , եւ կենդանիներն որ այս զգացումները ջեն իմանար՝ հոգի ալ ջ'ունին :

Ահա հոգիովն է որ մարդս Աստուած կ'զգայ . հոգիովն է , որ մարդըս անիրաւութեան եւ ոճիրին դէմ

կը գայրանայ . հոգիովն է որ մար-
դըս ճշմարտութեան համար իր ա-
րիւնը կը թափէ : Վերջապէս հոգին
է ամենայն բարեաց աղբիւրը :

Ժ • Գ Լ Ո Ւ Խ

Ք Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն

Հ Ո Գ Ի Ի Ն Զ Գ Ա Յ Ո Ւ Մ Ը

Ըսինք որ մարդս՝ կենդանիներուն
պէս , իր բոլորտիքը նիւթական գիծ
մը կամ պատնէշ մը ջունի , ու իր
զգացումները յագեցընելէն ետքը ,
ամենեւին ջը հանդարտելով անանկ

բաներ կ'զգայ ու կ'ուզէ , որ անհնար է կատարելը , ու կը պարտաւորի իր զգացումներուն ջափ մը , սահման մը եւ կարգ մը դնել :

Այս ջափը , սահմանը եւ կարգը՝ իր բարոյական զգացման լոյսն է որ երեւան կ'ելնէ :

Ի՞նչ են ընտանեկան կարգադրութիւնները . ի՞նչ են Ազգային օրէնքները :

Արդեօք մարդուս անկարգ զգացումներուն ջափ մը , սահման մը եւ կարգի մը չէ՞ն :

Օրէնքներուն միջնորդութեամբը չէ՞ որ գողը , եղեռնագործը եւ արիւնահեղը իրենց պատիժը կը գտնեն : Օրէնքներուն միջնորդութեամբը չէ՞ որ Ազգ մը իր անկարգութիւնները մոռնալով , քաղաքակր-

թութեան փառքը կ'ստանայ :

Ո՛վ բարերար Աստուած , մարդս
անճնիշխան ստեղծեցիր , տըվիր ի-
րեն այն ազատութիւնը՝ որով ամեն
բան ուզելու , ամեն բան ընելու կը
յանդգնի . սակայն այն ազատու-
թեան , այն անճնիշխանութեան հետ
մեկտեղ , տըվիր իրեն հոգի մ'ալ ,
որ իր բարոյական զգացումովը ա-
նոր անճնիշխանութեանը ջափ մը
կը դնէ ու կը կարգաւորէ :

Մարդս իր այս զգացումովը իր
վարմունքը կ'ուղղէ եւ կը կարգա-
ւորէ՝ որովհետեւ այս զգացման տե-
րը , հոգին՝ կ'զգայ ճշմարիտ ուղ-
ղութեան եւ կարգադրութեան այն
անսպառ աղբիւրը՝ որ է Աստուած :

ԺԱՑ ԳԼՈՒԽ

ՀՈԳԻԻՆ ԳԵՂԵՑԻԿԻՆ ԶԳԱՑՈՒՄԸ



Մարդս, իր մեջը գեղեցկութիւն մը կ'զգայ, անանկ կատարեալ գեղեցկութիւն մը՝ որին նմանը այս աշխարհիս վրայ չը կայ : Ամեն տեղ, եւ միշտ կը փնտրուէ՝ բայց չը կըրնար գտնել :

Սակայն այս գեղեցկութիւնը կայ, որ ինքը կ'զգայ ու կը փնտրուէ :

Ո՛ր է ուրեմն :

Ո՛վ մարդ, այն զմայլելի եւ ճշմարիտ գեղեցկութիւնը որ կը փնտրուես՝ այս աշխարհքիս մեջ չես կրնար գտնել : Անցիր այս աշխարհէն ուրիշ աշխարհ մը, մտիր յա-

Իտե՛նականութեան մեջ՝ ու հոն կը
գտնես այն կատարեալ գեղեցկու-
թիւնը , որ քու արարիչդ՝ քու Աստ-
ուածդ է :

ՃԲ. ԳԼՈՒԽ

ՀՈԳԻԻՆ ԱՆՎԱԽՃԱՆԻՆ ԶԳԱՑՈՒՄԸ

Աշխարհքիս մեջ , ինչ որ կը
տեսնենք , ինչ որ կը շօշափենք՝
բոլորն ալ անցողական են : Ինչպէս
տունկը եւ ծառը կը բուսնին , ա-
նանկ ալ կենդանին եւ մարդս կը
ծնին ու իրենց յատկացեալ շրջանը
կատարելէն ետքը , կը կորսըվին ու

աներեւոյթ կ'ըլլան :

Այս ոչնչութիւնը այս անցողական բաները՝ մարդուս վրայ ամենեւին չեն ազդեր : Կը տեսնէ մահին ըրած կոտորածը իր ազգատոհմին մէջ , կը տեսնէ իր ընկերին եւ ազգականին մեռնիլը առանց այլայլութեան , եւ թէ որ քիչ մը տրտմի ալ՝ ժամանակը , որ ամեն բան կ'աւրէ կը սկըրդէ , այն տրտմութիւնն ալ իր վրայէն կ'առնէ կը տանի :

Ինչո՞ւ համար մարդուս վրայ այս անհոգութիւնը եւ անխտրութիւնը :

Երբոր ամեն բան կ'երթայ անցեալին մէջ կ'ընկղմի՝ մարդս , որ միշտ ներկային մէջ կը քայլէ , իր առջեւն ապագայ մը եւ յոյս մը

կը տեսնէ :

Կը քայլէ միշտ դեպ 'ի այն ապագային , դեպ 'ի այն յոյսին :

Ի՞նչ է այս յոյսը , որ ամէն մարդ իր ներսի դին կ'զգայ :

Այն յոյսը ապագայ աշխարհի մըն է , այն յոյսը յաւիտենականութիւնն ու անվախճանն է :

Չենք կրնար անվախճանը հասկընալ , բայց կ'զգանք . եւ անվախճանը զգալով զԱստուած կ'զգանք . որովհետեւ միայն ան է յաւիտենականն ու անվախճանը :



ԺԳ. ԳԼՈՒԽ

ԲԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՀՈԳԻՒՆ ԶԳԱՑՈՒՄԸ



Մարդուս մեջ լոյս մը կայ, որով աղեկը գեշեան կը գատե ու ճշմարտութիւնը երեւան կը հանե :

Այս լոյսը բանականութիւնն է :

Հետեւաբար՝ բանականութիւնը ճշմարտութեան զգացումն է :

Ով որ այս զգացումը ունի իր մեջը, անիկայ լուսաւորեալ է. եւ ով որ չ'ունի՝ խաւարի մեջ է. ինչու որ ունեցողը միշտ ճշմարտութեան լոյսը փնտրուելով կը գտնե այն ճշմարիտ լոյսը՝ որ է Աստ-

ուած . Եւ ջոնեցողը միշտ անկէ հե-
ռու մնալով՝ մոլորութեան խաւարին
մէջ կը մնայ :



Ժ Գ . Գ Լ Ո Ւ Խ

Խ Ղ Մ Տ Մ Ը

Հ Ո Գ Ի Ի Ն Զ Գ Ս Ց Ո Ւ Մ Ը



Բանականութենէն կը ծնի խղճ-
մըտանքը :

Բանականութիւնը՝ մարդս կը
լուսաւորէ , եւ այս լուսաւորու-
թեամբը՝ խղճմտանքը աղէկը եւ գե-
շը ցոյց կուտայ :

Ով որ բանականութիւն ունի՝
ուղիղ խղճմտանք ալ ունի . ով որ
բանականութիւն չունի՝ անոր խղճ-
մտանքը կոյր է :

Առագակը , անցնող ճամբորդը
կը կողոպտէ ու կ'սպաննէ առանց
իր խղճմտանքին մեջ դիմադրու-
թիւն մը գգալու : Բարի մարդը՝
պատահմամբ անիրաւ տեղը տղայ
մը կը սաստէ ու ետքը իր անիրա-
ւութիւնը հասկընալով , կը գղջայ :

Առաջինին խղճմտանքը կոյր ըլ-
լալուն՝ գեշ գործողութիւնը իբրեւ
բարի կ'ընդունի , եւ ինքը ուղիղ
ըլլալուն՝ գեշը կը ճանչէ ու կը գղջայ :

Խղճմտանքը հոգիին աչքն է .
բանականութեան լոյսովը այս աչ-
քերը կը բացվին , ու առաքինու-
թիւնը երեւան կ'ելնէ :

Առաքինութեամբ մարդս իր Ա-
րարչին կը նմանի , որովհետեւ ա-
ռաքինութեամբ մարդս բարի կ'ըլ-
լայ , եւ ճշմարիտ բարութիւնն ալ
Աստուած է :



Գ . Մ Ա Ս

ՄԱՅՐԵՐՈՒՆ ԿՐՕՆՔԸ

ԺԵ . ՔԼՈՒԽ

ԶԵԿՈՒՑՈՒՄ

Այս մասին մեզ պիտի խօսիմ ա-
մենափափուկ էւ ծանր խնդիրի մը
վրայ՝ որուն համար մեծամեծ վե-
ճեր , ահագին կռիւներ ծագած են
աշխարհիս մեջ , ու միշտ կը տես-
նենք :

Այս խնդիրը կրօնքն է :

Կրօնքի վրայ պիտի խօսիմ ա-
նանկ Ազգի մը առջեւ , որ միայն

անով կը կառավարվի է. իր ազ-
գութիւնը կը պահէ . կրօնքի վրայ
պիտի խօսիմ անանկ մարդերու առ-
ջէ, որ հաւատքը միայն նախա-
պաշարութեամբով ուղիղ կը կարծեն.
կրօնքի վրայ պիտի խօսիմ անանկ
Աստուածաբաններու առջէ, որ
քաղաքակրթութիւնը կրօնքի ար-
գելք կը կարծեն, է. ուր որ քա-
ղաքակրթութեան նշոյլ մը տեսնեն՝
շուտ մը գանի խափանելու կ'աշ-
խատին վախնալով որ անհաւա-
տութիւն չը ծագի :

Այս տեսակ մարդերու առջէ,
ասանկ ամենուն սրտին, ամենուն
խղճմտանքին վերաբերեալ խնդիրի
մը վրայ խօսելու համար՝ պետք է
նախ է. առաջ իմացընեմ, որ իմ
նպատակս մեր կրօնքէն, մեր Ս. Ե-

կեղեցիին օրհնքներէն բան մը պակ-
սեցընել կամ աւելցընել չէ , այլ կը-
րօնքին ի՞նչ բան ըլլալը եւ ո՞րկէ
լառաջ գալը քննել , աշխարհիս կը-
րօնքներէն ո՛րը ճշմարիտ եւ մար-
դուս յարմար ու օգտակար ըլլալը
դիտել՝ վերջապէս քրիստոնէայ մե-
կուսմը պարտքերը ճանչցընել է :

Այս պիտի ընեմ առանց ճշ-
մարտութիւնը ծածկելու , առանց
կողմնակցութեան եւ առանց նա-
խապաշարեալ մարդոց սպառնա-
լիքներէն վախնալու :



Ժ Զ • Գ Լ Ո Ւ Խ

Կ Ր Օ Ն Ք

Ապա թէ ակն ըս չար է, ամենայն
մարմինդ 'ի խաւարի եղիցի: Իսկ
արդ՝ եթէ լոյսդ որ 'ի քեզ է՝ խա-
ւար է, խաւարն որչափ եւս:

(Մատթ. ԳԼ. Գ):



Աստուած մարդս ստեղծեց ու
անոր սրտին մէջ իր լոյսը, իր պատ-
կերը դրաւ:

Այն լոյսը հոգին է, որուն զգա-
ցումներովը մարդս իր Աստուածը,
է. իր յաւիտենականութիւնը կ'զգայ-
ամեն ճշմարտութիւն է. ամեն բա-
րութեան աղբիւրը, ան ըլլալը կը
հասկընայ ու սրտանց կը համոզվի:

Այս համոզումեն կը ծնի հաւատ-
քը , որ է հաւատայ :

Հոգիին զգացումներն ունեցողը՝
համոզմամբ կը հաւտայ որ անվախ-
ճան է անժամանակ Աստուած մը
կայ , բոլոր տիեզերք ստեղծող , որ
միշտ բարի , արդար է ուղիղ է ,
հետեւաբար ինչ որ կամեցած է ,
ինչ որ ըրած է , ամենն ալ բարի ,
արդար է ուղիղ են :

Հոգիին զգացումները ունեցողը
կը հաւտայ , որ մարդս՝ որ աշխարհ-
քիս բոլոր եակներուն մեջ միայն
ինք Աստուծոյ հոօքիւնը է անվախ-
ճան ըլլալը կ'զգայ , է անոր տեն-
ջը ունի սրտին մեջ , է անկէ յա-
ռաջ եկած բարիքները միայն ինք
ընդհանուր կերպով կը վայելէ՝ ու-
րեմն , մարդս այն ուրիշ եակնե-

րուն պէս , աշխարհքիս վրայ ոչ ըն-
ջաբար չը պիտի գայ անցնի' այլ
պիտի վայելէ յաւիտենական երա-
նութիւն մը ու փառք մը , իր տի-
րոջը քով :

Հոգիին զգացումներն ունեցողը
կը հաստայ որ , որովհետեւ Աստ-
ուած միշտ բարի արդար է. ուղիղ
է' ջարութիւնը անիրաւութիւնը է.
ստութիւնը ջրնդունիր . ուրեմն մար-
դըս այ անոր պէս , ջարութիւնը
ընդունելու չէ , ու միշտ բարի ,
արդար է. ուղիղ ըլլալու է :

Հոգիին զգացումներն ունեցողը
կը հաստայ որ , որովհետեւ Աստ-
ուած ջարութիւնը չ'ընդունիր' ու-
րեմն ջարութիւն ընողն այ չ'ըն-
դունիր . է. անոնք' որ միշտ ջա-
րութեամբ կ'ապրին , չը պիտի վա-

յէէն այն յաւիտեանական Երանութիւնն ու փառքը՝ որ միայն բարի Եղողներուն պատրաստըված է :

Ուրեմն հաւատքը մարդուս սրբտին մխիթարութիւնն է Եւ հոգիէն կը ծնի :

Մարդուս սրտին մխիթարութիւնըն է կ'ըսեմ . որովհետեւ հաւատքը մարդուս ապագայ Երանութեանը Եւ յաւիտեանականութեանը յոյսն է . Եւ մարդս անով կը մխիթարվի , աշխարհի մեջ կրած անիրաւութիւններէն Եւ ջարութիւններէն :

Հոգիէն կը բոխի կ'ըսեմ՝ որովհետեւ յաւիտեանականութիւնը Աստուածային բան մըն է , Եւ միայն հոգին կրնայ գգայ գանի :

Ասոնցմէ կը հետեւցընեմ որ հոգիին գգացումները ջուներցողը, նըշ-

մարիտ հաւատք ալ ջուներնար , ին-
չու որ իր մէջը երկնայինը խափան-
ված ըլլալով՝ Աստուածայինը չը
կրնար գգալ :

Արդեօք ճշմարիտ հաւատք կըր-
նա՞յ ըլլալ առանց Աստուածային
գգացման :

Ուր որ ճշմարիտ հաւատք չը
կայ՝ հոն աւելորդապաշտութիւն եւ
կրօնամոլութիւն կայ . այսինքն ա-
մեն բարութեան ամեն կարգադրու-
թեան աղբիւրը , միայն ճշմարիտ եւ
մխիթար յոյսը՝ Աստուած , մեկդի
դրված , ու հաւատքը՝ աշխարհա-
յին ջնջին բաներու վրայ հիմնըված :

Ասանկ հաւատք մը , ճշմարիտ
հաւատքին սրբութիւնը , անարա-
տութիւնը եւ մխիթարութիւնը չը
կրնար ուներնալ . որովհետեւ մարդ-

կութեան զգացումներուն եւ բանա-
կանութեանը չը յարմարիր . եւ այն
հաւատքը որ Աստուծոյ տրված ըզ-
գացումներուն չը յարմարիր՝ ճշմա-
րիտ չը կրնար ըլլալ . զի այն ա-
տեն Աստուած խաբած կ'ըլլայ մեզ :

ԺԷ. ՔԼՈՒԽ

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Ե՞ս լոյս եկի յաշխարհ՝ զի ամենայն
որ հաւատասց յիս, 'ի խաւարի մի
մնասցէ :

Աստուած բոլոր տիեզերքը ըս-
տեղծած ու անոր կառավարութիւն

նը ընդհանուր օրէնքներով կարգա-
դրած է , որոնց կ'ըսենք բնական
օրէնք :

Ճշմարիտ կրօնքը այս օրէնքնե-
րուն յարմար ըլլալու է , ինչու որ
անոնց հակառակ կրօնքը Աստու-
ծոյ դրած օրէնքներուն դէմ ըլլա-
լով՝ իր կամքին ալ դէմ եղած կ'ըլ-
լայ :

Աս ըսելէն ետքը կը բանամ Ա-
ւետարանը ու կ'սկըսիմ ուշադրու-
թեամբ քննել :

Բնական օրէնքները՝ բարի , ար-
դար ու գթած Աստուած մը կը յայտ-
նեն ինծի . Աւետարանին քարոզած
Աստուածն ալ բարի , արդար ու գթ-
թած է . որովհետեւ կ'ըսէ ,

« Զի եղիջիք որդիք հօր ձերոյ
« որ յերկինս է . զի զարեգակն իւր

« ծագե 'ի վերայ ջարաց եւ բար-
« եաց եւ ածե անճրեւ իւր 'ի վե-
« րայ արդարոց եւ մեղաւորաց » :

Ի՛նչ ճշմարտութիւն , ի՛նչ յար-
մարտութիւն բնական օրէնքներուն :
Ի՛նչ արդարութիւն ու սեր այս խօս-
քերուն մեջ :

Չը կայ Աւետարանին մեջ պատ-
ուեր մը կամ խրատ մը , որ մար-
դուս բանականութեան դեմ ըլլայ .
չը կայ պատուեր մը կամ խրատ
մը որ հոգիին ջազդէ :

Բոլոր Աւետարանը ճշմարտու-
թիւն ու լոյս է . որովհետեւ իր բո-
վանդակութիւնը Աստուածային ան-
խախտ ու արդար օրէնքներուն
յայտնութիւնն են եւ մարդս դեպ 'ի
Աստուած կ'առաջնորդէն :

Ի՛նչ պարզութիւն ու քաղցրու-

թիւն եւ ի՞նչ վսեմ բարոյական նա-
եւ սա խօսքերուն մեջ :

« Ինչպէս որ կ'ուզէք , որ մար-
« դիկ ձեզի ընեն , անանկ ըրէք
« դուք ալ անոնց » :

« Թե որ ջես ուզեր որ քեզի գե-
« շուքիւն ընեն , դու ալ ուրիշին
« մընէր » :

« Սիրեցէք ձեր թշնամիները ,
« բարի ըրէք ձեր ատելիներուն եւ
« փոխ տըվէք անոնց , որոնցմէ
« առնելու յոյս չունիք . այն ատեն
« ձեր վարձքը շատ կ'ըլլայ ու բարձ-
« րելոյն որդի կ'ըլլաք , որ ջարե-
« րուն եւ ապերախտներուն հետ
« քաղցր է : Եւ գրած էդէք ինչպէս
« որ ձեր հայրը գրած է :

Բնական օրէնքներուն նայելով ,
մարդոց մեջ ոչ ազգի խտրութիւն

պետք է ըլլայ, ոչ աստիճանի : Ամեն մարդ մի է. նոյն իրաւունքները կը բերէ հետը յաշխարհ : Ով որ մէկ երկուքին իրաւունքները կ'էւելցընէ, 'ի վնաս ուրիշներուն, արտօնութիւններ մենաշնորհներ կը բաշխէ՝ մարդկութեան իրաւունքը է բնական օրէնքները ոտքի տակ կ'առնէ :

Եւ անա Աւետարանն ալ մի է. նոյնը կը պատուիրէ :

« Թագաւորք հեթանոսաց տիրէն
« նոցա է մեծամեծք նոցա իշխէն
« նոցա : Ոչ նոյնպէս իցէ է. 'ի ձե-
« րում միջի . ալլ որ կամիցի 'ի
« ձեռք մեծ լինել, եղիցի ձեր պաշ-
« տօնեայ, է որ կամիցի 'ի ձեռք
« առաջին լինել, եղիցի ամենե-
« ցուն ծառայ » :

Այս խօսքերուն տակէն կէլնէն ,
 հաւասարութեան ու ազատութեան
 սուրբ օրէնքը . զի այս խօսքերուն
 առջեւ մեկէն կ'ըլնին իրարու վրայ
 դար ու մար , բռնակալութիւններ ,
 ընկերական աստիճաններ , տոհմա-
 կան աստիճաններ : Աւետարանին
 խօսքին նայելով , Քրիստոնէութիւ-
 նը ընդհանուր եղբայրութիւն մըն է ,
 ուր ոչ ազատ կայ ոչ ծառայ , ոչ
 խուժողութ , ոչ հրեայ . ամեն մեկ
 մարդ ընդհանութիւն է իրարու հա-
 մար աշխատելով , էւ ընդհանուրը
 ամեն մեկ մարդու համար' սերը
 իբր էլեկզրական շղթայ մը իրարու
 միացընելով աշխրհի ամեն ազգե-
 րը , էւ Աստուած վերէն օրհնելով
 զայս սուրբ միութիւնը :

ՄԷԿ ԸՆՏԱՆԻՔ ԱՇԽԱՐՀՔԻ ՎՐԱՅ
ԵՒ ՄԷԿ ՀԱՅՐ ԵՐԿԻՆՔԸ

« Այս է պատուեր իմ գի սիրես-

« ջիք գմիմեանս . այնու ծանիցեն

« քե իմ աշակերտ էք , էթե սիրե-

« ցեք գմիմեանս » :

Այս սիրոյ պատուիրանը որ Ա-
ւետարանին ու քրիստոնէութեան
հիմն է , օրենք է մարգարէք անկէ
կախեալ են , եւ որ հրաշայի կեր-
պով մը գմարդկութիւնն Աստուծոյ
նետ կը կապէ , եւ գմարդիկ իրա-
րու մեջ , իբարու հետ . գրեթէ Ա-
ւետարանին ամեն էջերը անով լըց-
ված են :

Այս սերն ունեցողը կը ժառան-
գէ կեանք յաւիտենական :

Օրինականին մեկը՝ օր մը Յի-
սուսի ըսաւ . «Վարդապետ , ի՛նչ ը-

« Եւմ որ յաւիտենական կեանք ժա-
« ուանգեմ » . ըսաւ Յիսուս . « Ի՞նչ
« գրված է օրէնքին մէջ . Ի՞նչ կը
« կարդաս » :

Պատասխանեց օրինականը . « Քու-
« Տէր Աստուածդ բոլոր սրտովդ ու
« բոլոր գօրութիւնովդ ու բոլոր մըտ-
« քովդ սիրես եւ քու ընկերդ քու ան-
« ճիղ պէս » . — « աստոնք ըրէ ու
« յաւիտենական կեանք կ'ունենաս »
ըսաւ Յիսուս :

Ընկերը Աւետարանին մէջ այն
մարդն է , որ ճամբան կը հանդը-
պիս , ոչ կը ճանչես , ոչ լսած էս
եւ որ վիրաւորեալ գետինը ընկած
է ու քու օգնութեանդ կը կարօտի :

Քրիստոսի ըսած առակին մէջ
ատ անկեալը Սամարացի մըն է . Սա-
մարացիները ատելի ժողովուրդ մըն

Էին Հրեաներուն :

Նայե ինչպէս կը գարնէ մեկ խօսքով ընդ ազգային ատելութիւնները . նայե ինչպէս Քրիստոսի օրէնքին առջեւ . Աստուծոյ սիրելի է . ատելի ժողովուրդի նախապաշարումները ինքներէննուն կ'ըլնին :

Ամեն ազգ է . ամեն մարդ մեկ ըլլալով Աստուծոյ առջեւ . մարդիկ այ պիտի չը համարձակին իրար ատել կամ խտրել :

« Ոչ են կամք առաջի , Հօր ինչ մոյ որ յերկինս է , Էթէ կորիցէ մի որ 'ի փոքրկանցս յայսցանէ » :

Պիտի չը համարձակին յանուն Աստուծոյ թափել իրարու արիւն :
« Զի էթէ Աստուած քաղցր է 'ի վե-
« րայ ջարաց է . ապաշնորհաց » .
մարդ ի՞նչպէս առանց Աստուծոյ

դեմ ապստամբ ըլլալու կընայ ա-
տել իր ընկերը :

Օր մը Քրիստոս քաղաք մը գը-
նաց իր աշակերտներովը , չ'ընդո-
նէցին զինքը բնակիչները : « Տեր ,
« հրաման ըրէ , ըսին աշակերտ-
« ները . որ կրակ քափի երկինքէն
« ատոնց վրայ » : Սաստեց զանոնք
Յիսուս , « դուք ի՞նչ հոգու կը ծա-
« ուայէք , ըսաւ . Ես անոր համար
« չ'եկայ որ դատեմ զաշխարհ , այլ
« որ փրկեմ զաշխարհ » :

Ով որ այս խօսքերուն մէջ չը
կարդար կրօնական ներողամտու-
թիւն՝ ան՝ Քրիստոսի խօսքերը չը
հասկընար :

Շատ տեղ կը կրկնէ Քրիստոս
մեզի այս պատուերը : « Մի դա-
« տիք , զի մի դատիցիք . դուք ըստ

« մարմնոյ դատիք , ես ոչ դատիմ
« եւ ոչ զոք . քեպէտ եւ դատիմ
« եւ զոք' դատաստանն իմ ճշմա-
« րիտ է » :

Մարդերուն հեղինակութիւնը ցը-
րեց . երբ Տերը, Աստուած ինք' ճշ-
մարտութեան ու բարոյականի աղ-
բիւրը խօսեցաւ' մարդիկ ալ ինչ ի-
րաւունքով պիտի խօսին մեզի :

« Մի կոչեք զոք ուսիցիչ , զի
« մի է ձեր Վարդապետ » :

Ով որ անկէ 'ի վեր Քրիստոսի
ուսուցածէն դուրս բան ուսուցած
է կամ կ'ուսուցանէ , սուտ է այն-
պիսին , « որ ոչ ժողովէ ընդ իս'
« ցրուէ » . իսկ ով որ անոր վար-
դապետութիւնը կը տարածէ տգետ-
ներուն' անի մարդկութեան երախ-
տագիտութեանն ու Աստուծոյ վար-

ճատրութեանը արժանի է : « Եւ ով
« որ առնէ էւ ուսուցանէ՝ նա մեծ
« կոչեացի յարքայութեանն երկ-
« նից » :

Ասանկ ահա , մարդկութեան
բարերարներուն կարգը կը դասին
այն սուրբ Հայրապետներն էւ ամեն
ով որ Քրիստոսի վարդապետութիւ-
նը հասարակաց ըրին , էւ անոր
բանին ճշմարիտ էւ հաւատարիմ
քարոզ եղան :

Կեղծաւորութիւնը զարկաւ , ի-
բրբ մոլութեան են գեշը . էւ մա-
նաւանդ կրօնական կեղծաւորութիւ-
նը՝ վայ տալով փարիսէցիներուն :

Վա՛յ տըվաւ նաեւ անոնց , որ
կրօնքին արտաքին բաներուն միայն
էտէէ ըլլալով , եականը՝ այսինքն
Աստուծոյ արդարութիւնն ու սերը

մեկդի դրած են :

Վայ տըվաւ անոնց , որ դժուարակիր բեռեր կը բեռցընեն մարդոց՝ եւ իրենք մատերովնին անգամ ջեն ուզեր դպչիլ :

Վայ տըվաւ այն օրինականներուն , որ գիտութեան փականքները կը ծածկեն , իրենք ջեն մտներ , եւ որոնց կը մտնեն արգելք կ'ըլլան :

Ով որ գիտութեան տարածմանը արգելք կը դնէ , Աստուծոյ կամքին դէմ կը մեղանջէ . զի գիտութիւնը բնական օրէնքները էրեւան կը հանէ , եւ ազգերուն միութեան ճամբան կը հարթէ: Ազատութեամբ, հասարակութեամբ , եղբայրութեամբ , ազգերն իրարմէ գատող պատուարները կը խոնարհեցընէ եւ մարդուս

աշխատութիւնը կը թէթեցընէ :

Քրիստոսի լուծը քաղցր է ու բե-
ռը թէթէ . այս լուծը առնելու կո-
չեց ամեն աշխատեալները ու բեռ-
նաւորները, փոխանակ այն դժուա-
րակիր լուծին՝ զոր այլ է . այլ կար-
գի բռնաւորները կ'անցընեն անոնց
վիզը : Քրիստոսի դրած լուծը թե-
թէ է , որովհետեւ իր տըված օրէն-
քը մարդուս ամբողջութեանը , է
զգացմանը դէմ օրէնք մը չէ . այլ
ինչպէս ըսինք այս գլխին սկիզբն
այ , բոլորովին յարմար բնական օ-
րէնքներուն, զորոնք երեւան հանեց
ու հաստատեց :

Քրիստոս իր գեղեցիկ բարոյա-
կանովը՝ ու սուրբ արիւնովը փըր-
կեց զաշխարհ, որ մոլորութեանց ու
մոլութեանց գահավեժն 'ի վար գըլ-

տորած կը դապլտըկեր, ոչ հաւատք
մնացած էր երկրիս երեսը, ոչ բա-
րոյական :

Այս միջոցին էր, որ Քրիստոս
էկաւ փրկել զմարդկութիւնը . ուս-
տի նիւթականութեան մեջ լընկըղ-
մած աշխարհին դեմ՝ գլխաւորա-
պէս նիւթականութիւնը զարկաւ, եւ
հոգեւորը քարոզեց՝ մարդոյս յոյսն
ու նպատակը ուրիշ աշխարհի մեջ
դնելով :

Ի՞նչպէս կրցաւ այն խառնիճա-
դանձ վիհին մեջէն իր ճայնը լսեցը-
նել եւ նոր ընկերութիւնը կազմել: Ոչ
քաղաւորները ձեռք առաւ, ոչ հա-
րուստները, ոչ մեծամեծ խելքերը:
Աշխարհի բոլոր իշխանութիւնները,
ու մարդուս եւ գորաւոր կիրքերը,
իրեն դեմ ունենալով՝ ձկնորսներուն

ձեռքովը յաղթեց աշխարհի՛ մտուրի
մը մեջ ծնած մանուկը :

Ինք տիեզերի արարիչը գիտեր,
գաղտնի գօրութիւն մը մարդուս սըր-
տին խորունկ ծայրերուն մեջ պահ-
ված՝ զոր ինք ստեղծած ատենը դը-
րած էք հոն , անմահութեան զգա-
ցումը . անի արծարծեց , « Արքա-
« յութիւնն Աստուծոյ 'ի ներքս 'ի
« ձեզ է » :

Իր օրէն բուսական կ'առնէ աշ-
խարհիս յուսանորութիւնը ու քա-
ղաքակրթութիւնը : Իր դրած օրէն-
քը յաւիտենական է համաշխարհա-
կան օրէնք էր : Այսինքն ամեն ժա-
մանակի է ամեն տեղի ու ազգի
համար :

Մարդերուն տրված օրէնքները
մէկ ազգի ու սահմանական ժամա-

նակի համար էին :

Բանը որ 'ի յաւիտենից էր , Որդին Սուրբ Աստուած' մարմին առաւ եւ մարդկութեան անեղծանելի օրէնքն աւանդեց :

Չը կայ իմաստասէր մը , որչափ ալ երեւելի ըլլայ' որ կարենայ ուրանայ Աւետարանին բարոյականին անարատութիւնը , սրբութիւնը , որով շատ անգամ կը պարտաւորին խոստովանել , անոր Աստուածային ծագումը :

Եւ յիրաւի ով որ ճշմարտասիրութեան հոգով կը քննէ' կը համոզվի թէ Աւետարանին կատարելութիւնը , մահկանացուի մը գործք չէ , այլ աւելի բարձր ու կատարեալ եութեան մը գործ է անտարակոյս , այսինքն Աստուծոյ :

Մահկանացոյի մը ճեռքէ անանկ
կատարեալ գործք մը ելած չ'ունի .
մահկանացոյի մը վրայ անանկ կա-
տարելութիւն երբէք տեսնըված չէ :

Մարդս կրնայ իր ամեն ջանքն ը-
նել կատարեալ ըլլալու համար ,
կրնայ մօտենալ կատարելութեան ,
բայց կրնայ ալ ըլլալ սխալի : Ան-
կատար ստեղծված էակը՝ չը կրնար
բոլորովին կատարեալ ըլլալ :

Մարդ՝ աշխարհի վրայ ունե-
ցած չէ այն բարձր ու ընդհանուր
սէրը , այն կատարեալ սէրը՝ որ
գործքով ալ ցոյց տըվաւ Քրիստոս :

Խաչին վրայէն գինքը մեռցընող-
ներուն համար աղօթելը , մի թէ
մահկանացոյի գո՞րծք է :

Արդարեւ ի՛նչ կ'ըսէ մեծ հեղի-
նակ մը . « Եթէ Սոկրատի վարքն ու

մահը իմաստասերի մըն էր , Քրիստոսի վարքն ու մահը Աստուծոյ են՝ :

ԺԸ. ՔԼՈՒԽ

ԱԻԵՏԱՐԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆԸ

է և

ԺԱՄԱՆԱԿԻՍ ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆԸ

Որ աւնի զգաատուիրանս իմ՝ և պահէ զնոսա , նա է որ սիրէ զիս : Եւ որ սիրեն զիս , սիրեսցի 'ի հօրէ իմմէ . և ես սիրեցից զնա և երեւեցուցից նմա զիս :

Ամենուն յայտնի բան է որ՝ Աւետարանը քրիստոնէութեան օրէնքն

ու հիմն է , ու քրիստոնէի մը վարմունքը անոր պատուերներուն յարմար պիտի ըլլայ :

Այս յայտնի ճշմարտութիւնը ինծի առաջնորդ բռնելով՝ հոս պիտի քննեմ , ժամանակիս քրիստոնէաներուն վարքը , ու Աւետարանին պատուերներուն քովը դնելով՝ պիտի բնութեամբ այն յարմարութիւնը , որ մեր Քրիստոս Տէրը կը պատուիրէ :

Այս պիտի ընեմ առանց կողմնակցութեան եւ առանց ճշմարտութենէն խոտորելու , աղքատը եւ հարուստը մէկ բռնելով ու իմ քննութիւնս ազգին եւ բոլոր քրիստոնէաներուն վրայ ընդարձակելով : Ինչո՞ր որ Աւետարանը միայն աղքատներուն կամ հարուստներուն համար

գրուած չէ , այլ ընդհանուր կերպով բոլոր մարդկութեան համար :

Աւետարանը ընդհանուր կերպով մեկգմեկ սիրելի կը պատուիրէ : Ո՞ր է այն սերը ժամանակիս քրիստոնէաներուն մեջ : Արդեօք « Սիրեցեք « միմեանս » պատուերը՝ ատեցեք զմիմեա՞նս կը հասկըցվի կոր . որ այն սուրբ Սերին տեղ ատելութիւն կը տեսնեմ ամեն տեղ :

Քրիստոնէութիւնը՝ կարգ կարգ բաժնըված , քրիստոնէութիւնը , տեսակ տեսակ քրիստոնէութիւններու բաժնըված , մեկ կարգը միւս կարգը կ'ատէ՝ մեկ տեսակ քրիստոնէութիւնը միւս տեսակ քրիստոնէութիւնը՝ ամենքն ալ ճշմարտութիւնը իրենց սեպհականելով :

Արդեօք քանի՞ Աստուած կայ ,
քանի՞ ճշմարտութիւն եւ քանի՞ Աւե-
տարան :

Աւետարանը մեկ է եւ քրիստոնե-
ութիւնն ալ մեկ պիտի ըլլայ :

Աւետարանը սեր է , եւ քրիստո-
նեութիւնն ալ սեր պիտի ըլլայ :

Աւետարանը կ'ըսէ , « Բարի ը-
« րեք ձեզ ատողներուն » , բայց
մենք չարութիւն կ'ընենք մեզի բա-
րիք ընողներուն :

Աւետարանը կ'ըսէ , « Երանի մա-
« քուր սիրտ ունեցողներուն » . բայց
մենք ուղղութիւնը ժամանակիս ան-
յարմար սեպելով՝ կ'անարգենք ու-
ղիղ եղողները , յիմար կը կոչենք
զանոնք , ու միայն չար եւ ծուռ
սրտի տէր մարդիկը կը պատուենք ,
ճարպիկ ու խելացի ըսելով անոնց :

« Երտակ մարդը հիմայ փարայ
չըներ » խօսքը՝ մեջերնիս ընտանի
խօսք մը եղած չե՞ մի :

Աւետարանը կ'ըսէ . « Երանի ու
« դորմածներուն » , բայց մենք աղ-
քատութիւնը կ'ատենք ու միայն հա-
րըստութիւնը կը պատուենք . ինչու
որ երկնայինը մոռցած ըլլալով՝ մի-
այն աշխարհային ուրախութիւններ
տըվող բաներուն յարգերնիս կու-
տանք , այսինքն հարստութեան :

Հետեւաբար հարուստ մեկը՝ թէ
որ ամենաչար մեկն ալ ըլլայ՝ ա-
մեն տեղ յարգ ու պատիւ կը գտնէ,
սակայն աղքատ մը , ամենաբարի
մեկն ալ ըլլայ , ամեն տեղ ծուռ-
նայութիւններու եւ անարգանքներու
կը հանդիպի :

Քանի քանի անգամ ականջովս

լսած էմ քրիստոնէի մը սա անվայել խօսքը , աղքատ եւ բարի մարդերու համար . « քե որ աղէկ մարդ ըլլար նե՛ աղքատ ջեր ըլլար » :

Ո՛վ քրիստոնէութենէ խանգարեալ մարդիկ . զիտեմ որ քանի որ այս աշխարհիս վրայեք նե՛ պիտի անարգէք աղքատները , պիտի կողոպտէք զանոնք ձեր հարստութիւնը կրկնապատկելու համար , ու պիտի հանգիստ կեանք վարէք պաշարներու մէջ , երբոր այն խեղճերը , աշխատելով քրտինք ու արտօսք թափելով՝ հագիւ պիտի կարենան ձեր սեղաններուն եվելցած մէկ քանի փշրանքներուն արժանանալ :

Բայց դեռ չը մեռած , Ղազարոսի առակը միտքերնիդ բերե՛ք . ու հարուստ քրիստոնէի մը պարտք-

բը ճանչենք :

Աւետարանը երդում ընելը կարգիլէ , ու կ'ըսէ « ձեր այոն այո ըլ-
« լայ' եւ ոչը ոչ » :

Սակայն մենք , ոչ թէ միայն ճշմարիտ տեղը երդում կ'ընենք' այլ սուտ տեղը Աստուծոյ անունը բերաննիս կ'առնենք , Աստուծոյ սուրբ անունը ստուքեան եւ ջարութեան միջնորդ կ'ընենք : Եւ որովհետեւ դատաստանատեղիները, Աստուծոյ անունը միայն ճշմարտութեան յայտնութեանը կը գործածեն' մենք առանց խտրողութեան եւ խղճմտանքի , անով ջարութիւնը եւ ստուքիւնը իբրեւ բարութիւն եւ ճշմարտութիւն կը հաստացընենք :

Սակայն միայն մարդիկ կը հաստան ասոր , ու այն Աստուածը , որ

ամեն բան կը տեսնե՛ որ ամեն սրբ-
տի մեջ կը նայի՛ չը հաստար ու հա-
մեմատաբար կը վարձատրե :

Աւետարանը կ'ըսէ . « քե որ ո-
« ողորմութիւն ընեք՛ փարիսէցիներ-
« բուն պէս փող մի ջայեք առջեւ-
« նուդ » : Մենք՛ այս պատուերին
ճիշդ հակառակը կ'ընենք . ինչո՞ւ
որ ողորմութիւնը աղքատներուն օգ-
նութեանը համար ջ'ենք ըներ , այլ
մինակ մեր փառքին մեր անճնա-
կան շահին համար :

Հետեւաբար ամեն տեղ կը տա-
րածայնենք ու գրեթէ ամենուն ա-
կանջն 'ի վար կը պօռանք : Գոնե
տըված ողորմութիւննիս ողորմու-
թիւն ըլլայ . գոնե ըրած բարիքնիս
ընդհանուր կերպով վայելող ըլլայ .
միշտ մասնաւոր գործքեր , միշտ

մեր անճնական շահին ու փառքին համար :

Ի՞նչպէս ասանկ սուրբ եւ անարատ գիրքէ մը ասանկ վատ եւ անվայել քրիստոնէութիւն մը հանած են . ի՞նչպէս բարութեան եւ առաքինութեան տեղ , ջարութիւն եւ մոլութիւն կանգնած են :

Քրիստոս Աւետարանը ձեռքը աշխարհ եկաւ , մեր վրայի խաւարը փարատեց , ճշմարիտ Աստուածը ցոյց տրվաւ ու մեզ անոր մօտեցուց : Սակայն մենք չը կրնալով այնքան բարձրութեան մեջ կենալ , աշխատեցանք Քրիստոսի ցոյց տրված Աստուածը մինչեւ մեր կարգը իջեցնել . մեր ջար զգացումներն անոր սեպհականելով , Քրիստոսի սուրբ պատուերները մոռնալով , եւ

Աւետարանը հեռու նետելով :

Ճիշդ Քրիստոսի ըսածին պէս ըրինք . « նրազը գրուանին տակը « դրինք , ու մնացինք մենք խառնա- « րի մեջ » :


Արդեօք Աւետարանը անանկ հեռուն գոց պիտի մնա՞յ , արդեօք ժամանակիս քրիստոնէութիւնը չը՞ պիտի մօտենայ իր աղբիւրին անարատութեանը :

Ոչ , ոչ . Աւետարանը նորէն բանալու ժամանակը էկա :

Բանանք ուրեմն այն գիրքը որ մարդկութեան ապագան կը պարունակէ մեջը , ականջ դնենք անոր սուրբ պատուերներուն , որ մեր վարքը անոր համեմատ կարգադրենք :

ԺԲ. ԳԼՈՒԽ

ՃՇՄԱՐԻՏ ՔԱՀԱՆԱՆ



Ճշմարիտ քահանան Քրիստոսի
ճշմարիտ փոխանորդն է աշխարհի
վրայ :

Ի՞նչ ըրաւ Քրիստոս իր քարո-
զութեան երէք տարին :

Աղքատները հոգաց , հիւանդնե-
րուն , տառապեալներուն օգնու-
թեան հասաւ , եւ իր վարդապե-
տութիւնները դառ տըվաւ :

Ահա քահանային պաշտօնն ալ :

Աշխարհի անցողականութիւնը
եւ նեղութիւնները , ժամանակին

փոփոխութիւնները՝ մարդուն վարմունքին վրայ մեծ ազդեցութիւններ կ'ընեն, ու շատ անգամ հարուստը իր բոլոր ունեցածները յանկարծակի կորսընցունելով մարդկութեան պարտքերուն դէմ կը գործէ. աղքատը իր նեղութիւններուն մեջ չբաւորութենէն ստիպված, հարուստին ունեցածին աչք կը տնկէ :

Էրիկ մը իր կինը կորսընցունելով, կին մը իր երիկը, մայր մը իր գաւազը, գաւազ մը իր մայրը՝ վետանգաւոր անխտրութեան մեջ կ'ըյնին :

Քրիստոնէան այ մարդ ըլլալուն, այս նեղութիւններէն եւ ժամանակին փոփոխութիւններէն դուրս չէ, ու անոնց ազդեցութեամբը կրնայ աշխարհի վրայ իր պաշտօնը մոռնալ,

ու իրեն յատկացեալ ուղիղ ճամբէն
խոտորել :

Անոր համար պետք է քրիստո-
նէին քովը անանկ մեկը գտնելի՛
որ աշխարհային փոփոխութիւննե-
րուն մեջ անոր վարմունքը կարգա-
ւորէ : Քրիստոնէի մը պարտքերը
անոր աջքին առջեւը դնելով , ճշմա-
րիտ ճամբան ցոյց տալով , ու դեպ
ի իր նպատակը առաջնորդե-
լով :

Այս առաջնորդը քահանան է ,
որ Աւետարանը ձեռքը քրիստոնե-
ին առջեւէն պիտի քալէ :

Քահանան՝ մարդուս է երկին-
քին միջնորդն է :

Երկինքին միջնորդն է կ'ըսեմ ,
որովհետէ քահանան մարդս դեպ
ի իր նպատակին պիտի առաջ-

նորդէ եւ մարդոս նպատակն ալ
երկինքն է :

Սուրբ , ու վսեմ պաշտօն :

Քահանային պաշտօնը սուրբ է,
որովհետեւ ամեն քրիստոնեայ ա-
նոր ձեռքէն պիտի անցնի , ծնած
ժամանակը քրիստոնեութեան դը-
րոշմը առնելով , ջափահասութեան
ժամանակը ամուսնութեան պսակը,
եւ մեռած ժամանակը՝ մեղքերուն
ընդհանուր թողութիւնը եւ վերջին
մխիթարութիւնը :

Քահանային պաշտօնը սուրբ է,
որովհետեւ ամեն քրիստոնէի սիրտ ,
ամեն քրիստոնէի դուռ անոր կը
բացվի . աղքատը օգնութիւն եւ մը-
խիթարութիւն խնդրելու համար ,
հարուստը ողորմութիւն ճգնելու հա-
մար . եւ հարուստ ու աղքատ ա-

ուարինութեան ճամբան սորվելու
համար :


Քահանան քրիստոնէին հովիւն
է, ու զանի հեռու պիտի պահէ զայ-
լերուն յափշտակութենէն :

Իր կատարելութիւնը , իր վար-
քին մաքրութիւնը , իր յաւիտենա-
կան եւ միսիքարութեամբ լեցուն խը-
րատները , քրիստոնէին բարի օ-
րինակ եւ առաջնորդ պիտի ըլլան .
եւ քրիստոնէան այլ , այս Աւետա-
րանական կատարելութիւնը անոր
վրայ տեսնելով՝ միտքը պիտի բե-
րէ իր բարի , արդար եւ գրած Քը-
րիստոս Տէրը , որ ամեն տեղ խա-
ղաղութիւն ու եղբայրսիրութիւն քա-
րոզեց , ջարութեան դէմ բարիք ը-
նել , եւ մեզ անիծողները օրհնել
պատուիրեց , ու պիտի պատուէ այն

բահանան, որ իր կատարելութեամբ
բը անոր կը նմանի :

Յիրաւի ասանկ կատարելութիւն
մ'ալ պատիւի է. յարգանաց արժա-
նի է :

Վ Ե Բ Զ





Ա. ՄԱՍ

ՄԱՅՐԵՐՈՒՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Ա. ԳԼ.	Դաստիարակութեան ազդեցութիւնը.	45
Բ.	— Ժամանակիս դաստիարակութիւնը.	47
Գ.	— Մանկանց ճշմարիտ դաստիարակը.	27
Դ.	— Կիներուն ազդեցութիւնը	31
Ե.	— Ամուսնութիւն եւ քնտանիք.	55
Զ.	— ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ. Հօր մը եւ մօր մը պարտքերը.	42
Է.	— ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆ. Նախընթաց գըլուխներուն վրայ դաստիարակութիւն Աղջիկներու.	51

Բ. ՄԱՍ

ՀՈԳԻԻՆ ԴԱՍՑԻԱՐԱԿՈՒԹԻԻՆԸ


Ը. Գ.Լ.	Մարդուս երկու տեսակ զգացումները, այս զգա- ցումները իրարմէ գա- տելու վտանգը.	60
Թ. —	Հոգի.	69
Ժ. —	ԲԱՐՈՅԱԿԱՆ. Հոգիին ըզ- գացումը.	82
ԺԱ. —	Հոգիին գեղեցիկին զգա- ցումը.	85
ԺԲ. —	Հոգիին անվախճանին ըզ- գացումը.	86
ԺԳ. —	ԲԱՆԱԿԱՆՈՒԹԻԻՆ. Հոգի- ին զգացումը.	89
ԺԴ. —	ԽՂՃՄՏԱՆԲ. Հոգիին ըզ- գացումը.	90



Գ. ՄԱՍ

ՄԱՅՐԵՐՈՒՆ ԿՐՕՆՔԸ

ԺԵ. ԳԼ. ԶԵԿՈՒԳՈՒՄ.	95
ԺԶ. — ԿՐՕՆՔ.	96
ԺԷ. — ՍԱԷՏԱՐԱՆ.	101
ԺԸ. — ՍԱԷՏԱՐԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՆԵ- ՆՔԻՆՆԵՐ, ԵՒ ԺԱՄԱՆԱԿԻՍ ՔՐԻՍՏՈՆԵՆՔԻՆՆԵՐ.	119
ԺԹ. — ԾՂՄԱՐԻՍՏ ՔԱՏՈՒՆԱՆ.	129



Վ Ր Ի Պ Ա Կ Վ

Երև.	Տող.	Սխալ.	Ուղղ.
14	16	Իր վիճակին	Իր այս վիճակին
45	12	համբ	հաճը
51	15	Իր մայրը,	Իբր մայր,
56	6	Կարիւնացու:	Կորիւնացու:
57	14	Կարիւնացու	Կորիւնացու
58	10	Կարիւնացու	Կորիւնացու
63	16	ճեց:	ճեց մի:
71	7	ազգին	ազգեմ
83	15	կարգի մը	կարգ մը
91	14	Եւ ինքը	Գր. Երկրորդին
110	1	կընայ	կընայ
116	7	Էք	Էք
124	11	պաշար-ներու.	պաշար-ներու.

